

7-8(365-366)
31.03.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն և գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՊԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀՈՒՆՈՒՄԸ

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջը պատմական արդարությունը վերականգնելու և հետագա ցեղասպանությունները կանխարգելելու հստակ նպատակ ունի: Հայ պետական ու քաղաքական գործիչների կողմից միջազգային տարբերատյաններում հաճախակի հնչեցվող այս ահագանգը, ցավոք, դեռևս համակողմանի ըմբռնում չի գտել միջազգային հանրության և հատկապես մեծ տերությունների կողմից: Նման անտարբերության պատճառով է, որ 21-րդ դարակազմի կրկին տեղի ունեցավ հայերի ցեղասպանություն, ընդ որում, նույն այն մեթոդներով, ինչ մեկ դար առաջ՝ Արևմտյան Հայաստանում:

Քեսաբի մարտյան ողբերգությունն այլ կերպ չես կարող որակել, քանզի Սիրիայում գտնվող հայաբնակ այս գյուղաքաղաքը հենց թուրք ջարդարարների ձեռքով ավերվեց ու թալանվեց: Թուրքիայի իշխանությունների հանցավոր թողտվությամբ իսլամիստներն անարգել հատեցին թուրքական սահմանն ու հարձակվեցին սիրիական ճգնաժամին ոչնչով չառնչվող հայաշունչ բնակավայրի վրա: Քեսաբում բնակվող 1600 հայերը ստիպված եղան տարիանվել՝ բարբարոսներին թողնելով իրենց արդար քրտինքով վաստակած գույքն ու հարստությունը: Տեղին է հիշել Հրանտ Դինքի երբևէ արտահայտած այն միտքը, որ եթե թուրքերը 1915-ին անգամ ոսկե օղանավերով տարիանվեին հայ ազգաբնակչությանը, դա էլի ցեղասպանություն էր կոչվելու, որովհետև նրանք հայրենագրվել են բնիկ հայերին:

Հերթական անգամ դրսևորվեց թուրքի եզակի ԼԿ-տիությունը. Թուրքիայի արտգործնախարարությունը Քեսաբի ողբերգության առիթով հայտարարություն է տարածել, որով հերքում է իր երկրի մասնակցությունը հիշյալ իրադարձություններին: Ավելին, «մարդասիրական» ժեստ է արվել՝ քեսաբից հայերին իբր օգնելու նպատակով: Ով-ով՝ հայերս լավ գիտենք, թե ինչ է թուրքի «հունանիզմը», գիտեք նաև, որ դարաշրջանների փոփոխմամբ թուրքի գազանային բնույթը չի փոխվում:

Նկատենք, սա երրորդ հայկական ջարդն է, որ վերջին հարյուրամյակում թուրքերի կողմից իրականացվում է Քեսաբում: Առաջին ջարդը տեղի է ունեցել 1909 թվականին, երբ տեղաբնակ հայերը յաթաղանից փրկվելու համար ստիպված են եղել հանգրվանել Լաթաքիայում, որտեղ մեկ տարի մնալուց հետո կրկին վերադարձել են Քեսաբ ու վերականգնել իրենց ավերված տները: Երկրորդ անգամ նրանք լքել են հայրենի բնօրրանը 1915-ին. հազարավոր քեսաբցիներ զոհվել են աքսորի ճանապարհին, և միայն նրանց քիչ մասն է հետագայում վերադարձել Քեսաբ, վերընծյուղվել ու շիվ տվել հայրենի հողում:

Այս կապակցությամբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Հազարայի համաժողովների կենտրոնում օրերս հանդես է եկել թուրքի գործողությունները մերկացնող հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում է. «Քեսաբի հայերի այսօրվա՝ թվով արդեն երրորդ տեղահանությունը, ազգային փոքրամասնությունների պաշտպանության 21-րդ դարի մեխանիզմներին մետաված լրջագույն մարտահրավեր է: Կարծում եմ՝ բոլորը պետք է գիտակցեն, որ ինքնըստինքյան առաջ եկող զուգահեռները սթափեցնող պետք է լինեն բոլոր կողմերի համար»: ՀՀ նախագահը միաժամանակ նշել է, որ արդեն հանձնարարել է ՄԱԿ-ի՝ Նյու Յորքի և Ժնևի գրասենյակներում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններին՝ հետամուտ լինել մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների հարցերով մասնագիտացված կառույցներում Քեսաբի հայության անվտանգության երաշխավորման ու նրանց բնակության մշտական վայրեր ապահով վերադարձի խնդիրներին:

Հատկանշական է, որ քեսաբյան ողբերգությունն իրականացվել է Հայոց մեծ եղեռնի 100-ամյա տարելիցից հազիվ մեկ տարի առաջ: Ասել է թե՛ Թուրքիան ոչ միայն չի վախենում պատմության հետ առեւտուսից, այլ նույնիսկ ձգտում է այդ մռայլ եղբրին նոր սև դրվագներ ավելացնել: Սա նշանակում է, որ մեր պատմական հիշողությունը մշտաբար պահելու հետ մեկտեղ, պետք է միշտ զգոն լինենք, պատրաստ՝ դարավոր թշնամու ամեն մի սադրանքին: Սա մեր ժողովրդի հազարամյա պատմության կարևորագույն հուշումն է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԿԱՆ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ Հանդիմուն ԱրՊՀ-ում

Մարտի 20-ին Նախագահը հերթական այցը կատարեց Արցախի պետական համալսարան: ԱրՊՀ միստերի դալիժնում կայացած հանդիպմանը ողջույնի խոսք ասաց ռեկտոր Մանուշ Մինասյանը: Նա շնորհակալություն հայտնեց երկրի ղեկավարին՝ կրթության ոլորտը և մասնավորապես մայր բուհի հիմնախնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և դրանց լուծմանն աջակցելու համար, ինչը նշանակում է, որ պետության զարգացման առանցքում դրվում է կրթությունը, կիրք և զարգացած սերունդ ունենալու հրամայականը: Մ. Մինասյանը նախ անդրադարձավ բուհում իրականացվող բարեփոխումներին, որոնք բխում են ժամանակի նոր պահանջների ու մարտահրավերների թելադրանքից: Այսօր ժամանակի պահանջն է անցնել բովանդակային բարեփոխումների: Ռեկտորը հակիրճ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք տարվում են այդ ուղղությամբ: Այդ նախքից են ուսանողների մոտ նախաձեռնությունների ակտիվացման աշխատանքները, հատկապես գիտական աշխատանքների խրախուսման ուղղությամբ: Մշակվում է նոր ուսումնականից կենտրոնված մի շարք մասնագիտությունների գծով նոր ուսումնական պլաններ: Համալսարանը մշտապես ձգտում է նորարարական ուսումնական մեթոդները զուգակցել արժանապայել և հայրենասեր քաղաքացիների դաստիարակության գործընթացի հետ: Ժամանակի պահանջները նոր մոտեցումներ, նոր խնդիրներ են դնում նաև կրթության ոլորտում: Այս առումով ռեկտորը նշեց, որ արՊՀ-ում ռեկտորը մշտապես կազմակերպում է հանրակրթության միջոցով մշակույթի և գիտության միջոցով մշակույթի զարգացումը: Միջոցով մշակույթի և գիտության միջոցով մշակույթի զարգացումը, որն ակտիվորեն մասնակցում է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին: Սիս թե ինչու այստեղ, որտեղ կենտրոնացված է հանրապետության մտավորականության սերունքը, պարբերաբար պետք է հաշվետու լինել երկրի սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի և այդ ուղղությամբ երկրի իշխանությունների կողմից վարվող քաղաքականության մասին:

Ոչ պակաս կարևոր խնդիր է կադրային ներուժի երիտասարդացումը: Խնդիրներից է բուհի եկամուտների և ծախսերի անհամաձայնությունը: Բարեփոխումների արդյունքում կրճատվել է մայր բուհի ուսանողների թիվը, ինչի հետևանքով նվազում են եկամուտները և ավելանում ծախսերը, հատկապես որ՝ անփոփոխ է մնալու ուսման վարձավճարների չափը: Ռեկտորը նշեց նաև ուսանողների ուսման վճարների վճարման գործընթացում որոշակի աջակցության մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը: Այդ առումով Հայաստանում կան բավական նորարարություններ, ինչպես, օրինակ, ուսման վճարների վարկավորման համակարգը, «Երիտասարդ գիտնականների» հիմնադրամը, որը սոցիալական որոշակի խնդիրներ է լուծում: Ռեկտորի բարձրացրած այս և նման խնդիրները, ինչպես ասաց հանրապետության Նախագահը, դեռ կքննարկվեն:

ԼՊՀ նախագահն իր ելույթը սկսեց ԱրՊՀ պարբերաբար կատարած այցելությանը շարժառիթի պարզաբանմամբ. մայր բուհը գիտակրթական ամենակարևոր հաստատություններից մեկն է, որտեղ կրթվել և դաստիարակվել է մեր պետության կադրային ներուժի, մտավորականության ու մասնագետների մի պատկառելի մասը: Այստեղ է նաև ուսում ստանում մեր երկրի երիտասարդության մի ստվար զանգվածը, որն ակտիվորեն մասնակցում է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին: Սիս թե ինչու այստեղ, որտեղ կենտրոնացված է հանրապետության մտավորականության սերունքը, պարբերաբար պետք է հաշվետու լինել երկրի սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի և այդ ուղղությամբ երկրի իշխանությունների կողմից վարվող քաղաքականության մասին:

Մարտի 20-ին, սոցիալ-քաղաքական ձեռքբերումների մասին, երկրի ղեկավարն ասաց, որ անցած տարի, ընդհանուր առմամբ, դրական է աճ է գրանցվել տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Համախառն ներքին արդյունքը կազմել է 167,4 մլրդ դրամ, որը գերազանցել է 2012-ի ցուցանիշն ավելի քան 9%-ով:

Գյուղատնտեսություն, հանքարդյունաբերություն, զբոսաշրջություն, շինարարություն, սրանք են այն հիմնական ոլորտները, որոնք հանդիսանում են երկրի տնտեսության շարժիչ ուժը և որոնք նախանշվել են որպես երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող ուղղություններ:

Հանքարդյունաբերությունը մեր տնտեսության ամենադինամիկ զարգացող ոլորտներից է, որը պետությունից ամենաեկամտաբեր աղբյուրներից մեկն է: Ներկա դրությամբ Արցախի երկրաբանական ֆոն-



դում գրանցված են 285 հանքավայրեր՝ օգտակար հանածոների արդյունահանման կետեր: Իրականացվում է մոտ 80 ծրագիր, որի գերակշիռ մասը բաժին է հասնում արդյունահանմանը: Առկա են մետաղական, ոչ մետաղական, վառելիքային հանքահորեր, որոնցից մի քանիսը բավականին խոշոր են և հեռանկարային: Հատուկ նշանակություն ունի Կաշեհի հանքավայրը, որը հարուստ է պղնձի, մոլիբդենի, ոսկու պաշարներով և գալիք տարիներին կդառնա հանրապետության կարևորագույն տնտեսական օբյեկտներից մեկը, կստեղծի նոր աշխատատեղեր: Հաշվի է առնվում, որ հանքարդյունաբերությունն ապահովում է բարձր տնտեսական աճ, որն իր հերթին պետք է ապահովի Արցախի տնտեսության համապարփակ զարգացումը և թույլ չտա, որ այն կախված լինի միայն մեկ ճյուղից: Այդ իսկ պատճառով բնական պաշարների զարգացման գործում հատուկ նշանակություն են տալիս վերականգնող ռեսուրսներին, մասնավորապես՝ հիդրոէներգետիկայի ոլորտին, ասաց ԼՊՀ Նախագահը՝ տեղեկացնելով, որ այստեղ ունենք շոշափելի տեղաշարժեր: 2008-ից սկիզբ առած փոքր հեկտերի շահագործումը (շուրջ 10) հնարավորություն է ստեղծում արտադրել մոտ 270 մլն կիլովատ հզորությամբ էլեկտրաէներգիա, որը բավարարում է հանրապետության պահանջարկի 70%-ը:

Շինարարության ոլորտում կատարված աշխատանքների արդյունքները տեսանելի են հանրապետության ողջ տարածքում: Դա տեսանելի է ենթակառուցվածքների, բնակելի ու հասարակական նշանակության բազմաթիվ նոր օբյեկտների առկայությամբ: Իհարկե, դեռևս կան իրականացվող աշխատանքների որակի խնդիրներ, բայց դրանք աստիճանաբար լուծում են ստանում:

Մեր տնտեսության ավանդական ճյուղը գյուղատնտեսությունն է: Ուշադրություն է դարձվում նրա ինչպես ինտենսիվ, այնպես էլ էքստենսիվ զարգացմանը: Լայնածավալ ծրագրեր են իրականացվում հանրապետության տարբեր վայրերում, մասնավորապես, Արաբսի հովտում: Դա թույլ կտա բարձրացնել գյուղատն-

տեսական ապրանքների արտադրողականությունը, ինչպես նաև նախարդյալներ կստեղծի ժողովրդագրական վիճակի զարգացման համար: Իսկ արցախյան գյուղը և նրա շարունակական զորացումը մեր ազգային անվտանգության կարևորագույն խնդիրներից է, նշեց երկրի ղեկավարը՝ կարևոր համարելով մշակվող գյուղատնտեսական տարածքներին զուգահեռ՝ այստեղ կենսունակ բնակավայրերի առկայությունը:

Մեր երկրի սոցիալ-տնտեսական ռազմավարական ուղղություններից է զբոսաշրջությունը: Այս ոլորտի զարգացման համար ունենք բարենպաստ բնապահպանական վայրեր: Զբոսաշրջությունը նաև համարվում է մեր երկրի արտաքին աշխարհին ներկայացնելու, այլ պետությունների հետ շփումներն ընդլայնելու կարևոր ուղղություններից մեկը, ինչը նպաստում է ԼՊՀ ճանաչման գործընթացին: Ոչ պակաս կարևոր է այն, որ զբոսաշրջության զարգացման ուղղությամբ համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը բերելու է նորից աշխատատեղերի բացմանը: Նախագահն անդրադարձավ պետության կողմից ազգային արժեքների պահպանմանը, մշակույթի զարգացման ուղղված ծրագրերին՝ այդ գործում մեծ տեղ հատկացնելով երիտասարդությանը՝ ընդգծելով, որ նա պետք է լինի ավելի ակտիվ այդ բոլոր ծրագրերի իրականացման և նոր գաղափարների ու նախաձեռնությունների ներկայացման գործում:

Երկրի ղեկավարի հավաստմամբ՝ մեր հանրապետության կարևորագույն խնդիրներից մեկն էլ մարդկային ռեսուրսի և մտավոր ներուժի զարգացումն է, որը սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր գործոններից է: Այս ամենը հաշվի առնելով՝ պետությունն ընդգծված ուշադրություն է դարձնում կրթության և գիտության ոլորտին:

Ժամանակակից պայմաններին համապատասխան կրթական համակարգ ունենալը պահանջում է համապարփակ ռազմավարության կիրառում՝ համաչափ զարգացնելով նրա բոլոր օղակները՝ նախադարձականից մինչև բարձրագույն կրթություն:

2

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

ՀԻՇԵԼ, ԴԱՏԱՊԱՐՏԵԼ, ԴԱՍԵՐ ԲԱՂԵԼ

ԱրՊՀ ուսանողական գիտական ընկերությունը (ՈԴԳ), «Կաճառ» գիտական կենտրոնը 34-ի և Շուշիի պատմության թանգարանի հետ համատեղ մարտի 21-ին ԱրՊՀ գիտ-խորհրդի նիստերի դահլիճում կազմակերպել է կլոր սեղան՝ նվիրված Ադրբեջանի հանրապետության կողմից 1920թ. մարտի 23-ին Շուշի քաղաքում կազմակերպված ու իրականացված հայերի կոտորածների 94-րդ տարելիցին և դրանց իրավաբանական պատասխանատվության հարցերին: Միջոցառման սկզբում ներկայացվեց լուսամասը հարգեցին Ադրբեջանի պետական ահաբեկչության և էթնիկական զտումների քաղաքականության հետևանքով նահատակված զոհերի անմեղ հիշատակը: Մասնակցում էին պատմաբաններ, իրավաբաններ, լրագրողներ, ուսանողներ:

ՈւԳԸ նախագահ Ավետիք Զարությունյանը, բացելով կլոր սեղանը, ասաց, որ նպատակը Շուշիում կազմակերպված կոտորածների մասին ևս մեկ անգամ բարձրաձայնելն է, միջազգային հանրության ուշադրությունը այս հարցի վրա սևեռելը և անհրաժեշտության դեպքում միջազգային իրավունքի կողմից սահմանված ընթացակարգով համապատասխան ատյաններ դիմելն ու ցեղասպան երկրին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելը, ինչպես նաև հետագա անելիքները նախանշելը:

ԱրՊՀ ուսանողության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտալի Յարանիշյանը կարևորեց միջոցառումը երկու տեսանկյունով. նախ՝ որպես գիտական ուղղվածություն ունեցող հեթանոսական միջոցառում՝ նշելով, որ համալսարանում վերջին ժամանակներս կամաց-կամաց, բայց հաստատակամորեն թափ են առնում ուսումնագիտական ուղղվածության միջոցառումները, որոնց կենտրոնական դեմքը դասախոսի աջակցությամբ դառնում են ուսանողները: Եվ այս առումով գոհունակություն հայտնեց, որ ուսանողական գիտական ընկերությունը վերջին 1-2 ամսվա ընթացքում իր կազմավորման վճռական փուլն անցնելուց հետո արդեն մի քանի միջոցառում է կազմակերպել: Ուրախալի է այն փաստը, որ դրանք շարունակական են, և առաջիկայում սպասվում են գիտաժողովներ Արցախում և Չայաստանում:

Օրվա միջոցառման առթիվ գնահատական տալը նա թողեց մասնագետներին, ինքը միայն տալով այդ դեպքերին հուզական գնահատական. լինելով Շոշ գյուղից, երեխա ժամանակից ի վեր բազմիցս լսել է Շուշիի իրադարձությունների մասին, որ ինչպես ժողովուրդ էր ասում՝ տեղի են ունեցել Շոշի դալայում, ինչի հետևանքով ավելի քան 25 հազար հայ բնակիչներից համարյա ոչ ոք չի մնացել այնտեղ, և որից հետո Շուշին դարձավ այնպիսին, ինչպիսին էր խորհրդային ժամանակաշրջանում:

«Կաճառ» գիտական կենտրոնը 34 նախագահ Միեր Զարությունյանի գնահատմամբ՝ Շուշիում տեղի ունեցած իրադարձությունները մեկ անգամ ևս վկայում են Ադրբեջանի Զանրապետության հակահայկական ելույթին, մեր ժողովրդի նկատմամբ ցեղասպան քաղաքականության մասին: Երբ այդ պետությունը բարձր ամբիոններից խոսում է ժողովրդավարական արժեքների մասին, մեղադրում հայկական կողմին չարած հանցանքների համար, ավելի քան հրատապ է դառնում անցյալի նման ողբերգական իրադարձությունների վերաբերյալ հարցերը, դրանց համարժեք գնահատական տալը և Ադրբեջանի իրական դեմքը պարզելը: Դա նաև թելադրված է այսօր լայն թափ ստացած տեղեկատվական պատերազմով:

Ներկայումս դիտեցին «Կաճառ» գիտական 34-ի կողմից պատրաստված «Ահաբեկչություն» տեսանյութը, որը 1920թ. կոտորածների մասին է: Այնուհետև մասնակիցներն իրենց վերլուծությունը և դիրքորոշումը հայտնեցին:

Մ. Զարությունյանի կարծիքով՝ Շուշիի մարտյան ողբերգությունը պետք է դիտարկել երկու տեսանկյունից. արտաքին՝ ցույց տալու համար և մեր հակառակորդների հակա-

հայկական քաղաքականությունը, դատապարտելու, աշխարհին ցույց տալու մեր հարևանների մարդակեր դեմքը՝ դրանով իսկ հերքելու այն տեսակետը, որ հնարավոր է մի պետության մեջ այդ ազգի հետ մեր համակեցությունը: Ինչու չէ, նաև տեղեկատվական պատերազմում ցույց տալու՝ ով ով է: Այլապես նայելով համացանցի հարուստ նյութերին, թերթերով հրատարակվողները, տեսնում ենք, որ մեր հակառակորդը զոհի կերպարի մեջ մտած՝ հաջողեցնում է իր քարոզչությունը հասցնել միջազգային անտեղյակ հասարակությանը: Այդ տեսակետից մեծ է մեր անելիքը, և նա կոչ արեց երիտասարդներին տեղեկատվական պատերազմին իրենց ակտիվ մասնակցությունը բերել՝ իրենց տեսակետները հայտնելով, զնահատականներ տալով և հակադարձելով հակառակորդի քա-



Պրոգնոզայանը:

Երկրորդ տեսանկյունը պետք է այն լինի, որ հասկանանք՝ ի վերջո ինչու տեղի ունեցավ Շուշիի ողբերգությունը: Եվ ընդհանրապես, ինչու՞ հայ ժողովուրդը նման արհավիրքների առաջ է կանգնում, ենթարկվում է ցեղասպանության:

Ֆիլմի եզրափակիչ մասը լավատեսություն է, հավատի հաղթանակ, հզորության ցուցադրություն: Որպես հաղթող սերունդ իրավունք չունենք լացուկոծել, բայց և պետք է համարձակություն ունենալ հետադարձ հայացք ձգելու անցյալին, քննադատական հայացքով նայելու, որպեսզի կարողանանք վերադարձվել այդ անցյալը, արժևորել ներկան, ապագայում կարողանանք կանխել նման ողբերգությունները: «Բուրս ականատես ենք, որ պատմությունը կրկնվում է՝ տարբեր դրսևորումներով. այսօր էլ միջազգային դրությունն այնպիսին է, որ մենք տեսնում ենք Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների նախօրյակը, չեն ուզում բանդագուշակությամբ զբաղվել, բայց համանման լարված վիճակ է: Այնպես որ, մենք դեռ փորձությունների առաջ կկանգնենք, ուզում ենք, որ ավելի խելամիտ կանգնենք, կարողանանք հաղթահարել այդ փորձությունները, հասնել մեր վերջնական նպատակին, մեր անկախ, միացյալ հայրենիքի վերատիրելուն և շենացնելուն»,- այս է «Կաճառ» գիտական կենտրոնի նախագահի եզրակացությունը:

Ներկայումս դիտեցին «Կաճառ» գիտական 34-ի կողմից պատրաստված «Ահաբեկչություն» տեսանյութը, որը 1920թ. կոտորածների մասին է: Այնուհետև մասնակիցներն իրենց վերլուծությունն ու դիրքորոշումը հայտնեցին:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վալերի Ավանեսյանի կարծիքով՝ յուրաքանչյուր ցեղասպանություն, ողբերգություն տեղի է ունենում, երբ ստեղծվում են բարենպաստ պայմաններ: Այդ բարենպաստ պայմանները ստեղծված էին Թուրքիայի համար 1914-17 և 1919-23 թվականներին և Ադրբեջանի համար՝ 1920թ. պետությունների շահերի բախումից. նրանք կարողացան ի նպաստ իրենց երկրների գործել:

Ուշագրավ էին Շուշիի պատմության թանգարանի տնօրեն Աշոտ Զարությունյանի ուսումնասիրությունները, որ նա ներկայացրեց շնորհանդեսի կարգով:

Բանախոսը ներկայումս ուշադրությունը սևեռել է հետևյալ մտքերի վրա. նախ և առաջ, պատմական գրականության մեջ տերմիններ

գոյություն ունեն, որոնք ի վնաս մեզ են աշխատում: Այսպես, ընդունված է այն կարծիքը, թե Լեռնային Ղարաբաղը Լեռնի-Ստալինն են միացրել Ադրբեջանին: Պատմաբանի կարծիքով, Ղարաբաղի խնդիրը գոյություն ունի դեռ 1864-ից, երբ որ զենասովորների հարց է բարձրացվել. դա եղել է ցարիզմի ժամանակ: Այսինքն՝ այն ժամանակ արդեն Ադրբեջանի գործիչները պահանջներ ներկայացրին Ելիզավետպոլի գավառի նկատմամբ, իսկ հայ գործիչները չկարողացան հիմնավորել իրենց պահանջները: Այսինքն՝ նախ և առաջ, մենք պետք է իմանանք, որ գոյություն ունի ցարական ժամանակաշրջանում լավագույն բաժանում, ու դրա հետևանքով մենք հայերս չկարողացանք պահանջներ ներկայացնել այն տարածքների նկատմամբ, որտեղ ապրում են հայեր, առավել ևս, գործնական քայ-

լեր այդ ուղղությամբ չկատարվեցին: Ա. Զարությունյանի ուսումնասիրությունների առանցքը ներքին գործոններն են:

Նա ցուցադրեց այն ժամանակ թիֆլիսում իրատարակվող «Աշխատավոր» թերթի մարտի 5-ի խմբագրականը, որում հայտնվում է այն հետաքրքիր միտքը, որ գարնանը

Ադրբեջանը քոչը սարը բարձրացնելու պատրվակի տակ սկսելու է լայն արշավանք ամբողջ Զանգեզուրի դեմ, և մարզարե չպետք է լինել՝ գուշակելու, որ Ղարաբաղը կանգնած է արյունալի նախճիրի նախօրյակի առաջ, որովհետև կանկածից դուրս է, որ տեղի հայությունը չի համաձայնվի իր վիզը թեքել թուրքական յաթաղամի առաջ: Դա պատմագրության մեջ շատ է շահարկվում այն միտքը, որ մենք պատրաստ չենք եղել, չենք իմացել, որ թուրքերը կտորրած են իրականացնելու: Պատմաբանի համոզմամբ՝ դա ինքնարդարացման միջոց է, որը թույլ է տալիս հետագա քաղաքական գործիչներին՝ դարձյալ գործելու նույն սխալները: Նա կանգ առավ այն մտքի վրա, որ պատմաբանների զգալի մասը մի կողմ է թողել այն, որ Զայաստանի այն ժամանակվա կառավարությունը, 1918թ. Լեռնային Ղարաբաղում ստեղծված կառավարությունը անմիջականորեն մեղք ունեն 1920թ. մարտյան ողբերգության մեջ: Ինչու, որովհետև Զայաստանի այն ժամանակվա ռազմական նախարար Ռուբենն իր օրագրում մտցրել էր Նախիջևանն ազատագրելու գաղափարը և չէր ուզում Ղարաբաղի հարցով զբաղվել: Եվ երբ եղիչե Իշխանյանն այցելում է նրան և հարցնում, թե ինչ են անելու Ղարաբաղի հարցով, նա պատասխանում էր, որ Ղարաբաղցիներին պետք է տեղափոխել Նախիջևան, որ Կարսի շրջանը բնակեցնեն: Ա. Զարությունյանը վկայակոչում է եղիչե Իշխանյանի և վերջին շրջանում իրապարակված Զարություն Թունյանի և Աբրահ Կիսիբեկյանի հուշագրությունները, որոնք կարևոր նյութեր են ուսումնասիրելու և քննադատաբար մոտենալու մեր պատմությանը:

Ցուցադրվում է Շուշիի 1912թ. հատակագիծը: Ահա քաղաքի թաղամասերը՝ Ղազանչեցոց, Կուսանաց վանքի, Գյավուր Ղալայի, Մեղրեցոց... Եվ մի փոքրը՝ ադրբեջանցիները: Եվ այդ փոքր հատվածը լուծել է հայկական այդքան մեծ թաղամասերի հարցը: Զայական թաղամասերի դիրքն այնպիսին էր, որ հեշտությամբ կարող էին ազատվել ադրբեջանցիներից: Ա. Զարությունյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ժամանակվա Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որդեգրել էր հանդուրժողականության քաղաքականություն և անընդհանուս գալու էր հայերին, որոնք ուզում էին թուրքերի ամեն մի գործողությանը պատասխանել: Պատմաբանի եզրակացությունն այս է՝ հանդուրժողականությունը անտեղի է այն դեպքում, երբ գտնվում են անմիջականորեն պա-

տերազմի մեջ քո հակառակորդի հետ: Սա ուղղված է նրանց, ովքեր այսօր շատ են խոսում Ադրբեջանի հետ հնարավոր բարեկամության մասին:

Զաջորդ նյութով Ա. Զարությունյանը հերքեց այն տեսակետը, թե իբր հայերը պատրաստ չեն եղել զինական տեսակետից: Բերեց տվյալներ: Նա առաջարկեց Շուշիի կոտորածների առումով օգտագործել «ինտերվենտ» քաղաքական եզրույթը և ոչ թե «խաժամուժներ», «ավազակներ» գեղարվեստական բառերը՝ դրանով իսկ ցույց տալով, որ կոտորածները պետական քաղաքականության արդյունք էին, մեղքը զգել պետության վրա, իսկ երբ ասում ենք, որ «խաժամուժը» կամ «ավազակներն» են արել, հնարավորություն ենք տալիս պետությանը խուսանալու: Մեզ համար պետք է վիրավորական լինի, որ ինչ-որ ավազակներ, խաժամուժ մեր ազգը ջարդել են:

Բանախոսը հանգամանակից նկարագրեց մարտյան ողբերգության մանրամասները՝ վերջում նշելով, որ շնորհիվ նրա, որ Արցախյան պատերազմի ժամանակ հաշվի ենք առել 1918-20թթ. մեր թույլ տված սխալները, մենք հաղթել ենք: Մեզ հետ չի պահել այն հանգամանքը, որ մենք քիչ ենք, թուրքերը՝ շատ, և այլն: Թեման ցավոտ է՝ բոլորին հուզող: Շատերն էի ուզում արտահայտվել:

ԼՂՀ փոխստակազմների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպության նախագահ Սարասար Սարյանն առաջարկեց տեսաֆիլմը թարգմանել և տեղադրել համացանցում:

Ելույթ ունեցան նաև ուսանողները: Տեսակետ հնչեց, որ ազատ, անկախ և ծաղկուն հայրենիք ունենալու համար մենք դատապարտված ենք ուժեղ լինելու:

Երիտասարդ դասախոս Վահրամ Պողոսյանի կարծիքով՝ ֆիլմը ոչ միայն արթնացնում է մեր պատմական հիշողությունը, նաև հնարավորություն է տալիս մեր ուսանողությանը ճիշտ դաստիարակվել: Թեման պարտադրում է մեզ նաև քննադատաբար հետազոտելու մեր պատմությունը, որովհետև 1920թ. մարտյան դեպքերը միանշանակ պետք է կապել 1915-1918թթ. դեպքերի հետ: Ցավոք, դրանք արդիական են և այսօր: Ոչ վաղ անցյալում նման ոճրագործություն եղավ Սունգայիթում, Բաքվում, Կիրովաբադում: Այսօր այդ իրավիճակը գոյություն ունի մեր սահմանում, Ադրբեջանի նույն քաղաքականության արդյունք է, որ ամեն օր հակառակորդի կողմից կրակոցներ են լինում սահմանում: Ուստի ամենամեծ պատգամն այն է, որ մենք պետք է աջակուց լինենք, և այն արժեքները, որ մեր հայրերը ստեղծել են, կարողանանք պահել, և ամենամեծ գրավականը բանակն է:

Շահեր են բախվել՝ Անգլիայի, Թուրքիայի, Ռուսաստանի: Այսօր էլ ունենք եվրոպական շահեր, ռուսական շահեր, իսկ որտե՞ղ է մեր շահը: Եվ որպեսզի սխալներ թույլ չտանք, պետք է լավ ուսումնասիրել 1918-20թթ. իրադարձությունները: Այս համոզմունքին էին կլոր սեղանի մասնակիցները: Ոչ միայն ուսումնասիրել, այլև ակտիվ քարոզչություն տանել համացանցում, մասնակցել տեղեկատվական պատերազմին: Առանձնապես երիտասարդները, որոնք ավելի լավ են տիրապետում տեղեկատվական տեխնոլոգիաներին, իրենց նպաստը բերեն այս գործին:

Կլոր սեղանի մասնակիցների կողմից ընդունվեց հայտարարություն, որում մասնավորապես ասվում է. «Շուշի քաղաքի մարտյան ողբերգության 94-րդ տարելիցին նվիրված կլոր սեղանի մասնակիցները դատապարտում են Ադրբեջանի ոճրագործությունը և վստահ են, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական գնահատական տալը նման դրսևորումների կանխարգելման արդյունավետ միջոցը կլինեն»:

ՈԱԶՄԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱԶԳԱՅԻՆ ՍԻՄՎՈԼԻԿԱՅԻ ԴԵՐԸ՝ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՅՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԶԻՆՏԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԴԱՅՄԱՆ

Հայաստանի կառավարման ակադեմիայի կողմից անցկացված հարցումների արդյունքներով Պաշտպանության բանակում ծնողների վերաբերմունքը ծառայության նկատմամբ 41%-ով դրական է, 15%-ով՝ բացասական, 44%-ով՝ չեզոք: Այստեղ մեղքը սխալ է բարդել սոսկ ընտանիքի կամ դպրոցի վրա, որոնց վրա է ըստ էության դրված երեխաների՝ բանակում ծառայելու համար հոգեբանական պատրաստության մշակույթը: Այնուհանդերձ, պետք է նշել, որ հոգեբանական պատրաստության մշակույթի ձևավորման գործում առաջնային տեղը տրվում է հենց ծեղ, հարգելի զինվորները: Հարցման արդյունքների մեկ այլ ցուցիչ է ևս վտանգ է պարունակում հարցվողների մոտ 40%-ի մեջ Հայաստանի Հանրապետության ԶՈՒ-ի նկատմամբ դրական, 26%-ի մեջ՝ բացասական, իսկ 30%-ի մեջ չեզոք վերաբերմունք կա: Ինտերյույնները ծնվում է ինքնուրույն կապից, որտեղ բացակայում են դրական, պատկերավոր ասոցիատիվ (զուգորդական) կապերը: Մենք ունենք Հայոց բանակի հետ կապված ասոցիատիվ ուժեղ կապեր ստեղծելու խնդիր: Չեն կարծում, թե բանակի սիմվոլիկայի մեջ կան բազում ազգային կերպարներ, որոնք Արցախյան պատերազմի ծնունդ են: Բանակի և զինվորական ծառայության հետ ասոցիատիվ դրական կապերի ստեղծումը պետք է սկսել ավագ դպրոցական տարիքից: Բանակի և զինվորական ծառայության հետ դրական ասոցիատիվ կապեր կարող են ստեղծել այն զինվորները, որոնք մոդուլային են, էթնոկիր, այսինքն՝ իրենց մեջ կրում են ազգային վեհ գաղափարներ և ազգի հիմնական հատկանիշներն ու հոգեկերտվածքը, ունեն ազգային ուժեղ ինքնագիտակցություն և էտալոնային (չափաճանաչող) իշխանություն՝ դպրոցականների վրա: Այդ իշխանությունը, ազդեցության ուժը հիմնված է բացառապես ճիշտ հեղինակության վրա:

Եթե նորակազմը մերժողական վերաբերմունք է դրսևորում սպաների կամ զինվորական ծառայության նկատմամբ, ապա մենք գործ ունենք ոչ միայն վերջինիս հեղինակության հետ կապված խնդիրների, այլև այն հոգեֆիզիոլոգիական պատրաստականության վիճակի հետ, որն, ըստ էության, պետք է ձևավորվի ընտանիքում և դպրոցում: Եթե նորակազմի հարմարվողականությունը ցածր է, այստեղ ևս խորհելու տեղիք ունենք: Ենթարտությունը ստիպում է ասել, որ զինվորները նույնպես այս առումով զգալի անելիքներ ունեն: Պետք է հիշել մեկ կարևոր համազանգ. այն է՝ տարբեր գզայարանների օգնությամբ ընկալվող պատկերները գլխուղեղի համադրական աշխատանքի շնորհիվ կապվում են միմյանց և հիշողության մեջ պահպանվում են միասին, ինչը և հնարավորություն է տալիս հետագայում դրանք գիտակցու-

թյան ուղղորտում վերադառնալ գուցե ավելի ճշմարիտ է: Իսկ սիմվոլը կամ խորհրդանշանն այնպիսի մի առարկա է, պատկեր, գործողություն կամ հոգևոր արժեք, որը մենք դիտում ենք որպես ինչ-որ այլ երևույթի փոխարեն հանդես եկող և ընկալման համար մատչելի օբյեկտ (Ա. Նալչաջյան): Եթե ինչպե՞ս սիմվոլները տվյալ էթնոսի հոգեկան կյանքի և մշակույթի միավորներ են, որոնք անհրաժեշտ են գորակոչային տարիքի դպրոցականների ազգային ինքնագիտակցության ձևավորման համար: Սիմվոլների համակարգեր է ստեղծում բանակը, որի ընկալումն ու յուրացումը ևս կարևոր են գորակոչային տարիքի դպրոցականների համար: Սա մեծապես կանխում է ապահարմարվողականության դրսևորումները կամ հասցումն և վազազույնի:

Եթե ինչպե՞ս կարևորագույն տարբերանշաններ են լեզուն, ինքնանվանումը և էթնիկական սիմվոլները: Երբ մտնում եք դասարան, չի խանգարում, որ դասը սկսեք ուղերձով կամ ինչ-որ կարգախոսով, որտեղ շեշտում ենք մեր էթնոնիմը (ինքնանվանում): Օրինակ, մենք հայ ենք և հպարտ ենք դրա համար, մենք կարող ենք պաշտպանել մեր հայրենիքի սահմանները, մեր հողը մեր արժանապատվությունն է, հետևապես, այն չենք կարող լքել: Վերցրեք ձեր այն զոհված համազուլդացու անձնական իրերից որևէ մեկը, ով Արցախյան պատերազմում աչքի է ընկել իր խիզախությամբ և ստեղծեք թանգարանային փոքրիկ անկյուն, որտեղ այդ իրերը ևս հանդես կգան սիմվոլների դերում և գերազանց կկատարեն իրենց գործառույթը:

Ժամանակի ընթացքում ազգային սիմվոլներ են դառնում քաղաքական և ռազմական գործիչները: Հայ ազգի համար նման խորհրդանիշներ են Տիգրան Մեծը, Վարդան Մամիկոնյանը, Դավիթ Բեկը, Անդրանիկը, Գարեգին Նժդեհը: Բոլոր այս մարդկանց լուսանկարները պետք է ունենան իրենց կայուն տեղը ռազմագիտության կաբինետում: Այդ անձինք խորհրդանշում են մեր ազգային անկախությունը, ապրելու կամքն ու ռազմական հանճարը: Նժդեհը, որի ազդեցությունը օր օրի մեծանում է, համապատասխանում է մեր ազգային իդեալական ես-պատկերին: Այս սիմվոլները նպաստում են ազգի գոյությանն ու զարգացմանը:

Եթե մենք ստեղծում ենք ազգային սիմվոլիկայի անհրաժեշտ միջավայր, ապա սա նպաստում է ազգային ինքնագնահատականի զարգացմանը: Հավելենք, որ բանակում կատարվող բոլոր արատավոր երևույթների, մասնավորապես սուիցիդի, վատ հեղինակության ձևավորման դեպքերի հիմքում ընկած է ցածր ինքնագնահատականի խնդիրը:

Եթե անհրաժեշտ քանակության սիմվոլները չեն ստեղծում այն միջավայրը, որն անհրաժեշտ է Հայոց բանակի մասին լիարժեք ու ամբողջական պատկերացում կազմելու համար, ապա

ձեր կողմից մատուցվող տեղեկատվությունը չի կարող լիարժեքորեն ծառայել իր վերջնական նպատակին: Բանակային սիմվոլիկային մենք սովորաբար համընդհանուր ենք միայն նախնական ռազմական պատրաստության կաբինետներում: Հուրախություն մեզ, վերջերս որոշ դպրոցներում (Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոց) արդեն ձևավորվում է բանակային միջավայրն արտացոլող սիմվոլիկ համակարգ: Դրանք Հայոց բանակի առարկան արտացոլող նկարներ են, մոդալ- և հեղինակություն վայելող ռազմական գործիչների կերպարներով, զինվորի առօրյան արտացոլող դրվագներ և այլն: Աշակերտի ընկալման ընթացքում առարկաների, երևույթների կամ միևնույն բարդ առարկաների մտապատկերների նման կապերն անվանում են զուգորդություններ: Դրանք էական նշանակություն ունեն հիշողության մեջ կազմակերպված ու ծավալուն գիտելիքներ մտապահելու համար:

Արդեն անցած դարաշրջանի կամ պատմական անձի կերպարը ոչ թե ամեն հաջորդ սերնդի կողմից նորովի ձևակերպվում ու զարգացվում է, այլ փոխանցվում է համաձայն ուղղորդող օրինակի, որն ապահովում է հետագա, հաջորդող սերունդներին ընդհանուր ժառանգությամբ (Է. Շիլլ): Կայուն հիշողությունները, որոնք անհրաժեշտ են ամուր ազգային սիմվոլային համակարգով՝ ստեղծելով կապեր ողջերի ու մեռածների միջև և նպաստում ներդաշնակության, համաձայնության կայացմանը ժամանակի ընթացքում:

Հիշողության հոգեբանական օրինաչափությունների մասին գաղափար չունեցող մարդիկ անգամ ինքնաբերաբար զուգորդություններ են կազմում՝ ընկալված տեղեկություններն ավելի ամուր և տևականորեն պահպանելու, միջավայրին հաջողությամբ հարմարվելու համար: Սիմվոլիկայի ճիշտ կիրառումը կնպաստի մի շարք այնպիսի կարևոր խնդիրների լուծմանը, ինչպիսիք են հոգեբանական ճիշտ իդեալների կերտումն է, զինծառայությանը հոգեբանորեն պատրաստվելու մշակույթի ձևավորումը, հայրենաճանաչությունը, հայրենապաշտությունը և այլն:

Ավագ դպրոցական տարիքում ձեռք է բերվում հոգեբանական, բարոյական, գաղափարական և քաղաքացիական հասունության մակարդակ, հետևապես, արժեքային կողմնորոշիչների դերն ամփոփելի է բանակային սոցիալականացման գործընթացին ճիշտ նախապատրաստելու գործում: Երբ անհրաժեշտ սիմվոլային միջավայրը չի ստեղծվում, դրանք կարող են լինել ոչ միայն նկարներ, իրեր, այլև ասույթներ, գաղափարական մտքեր, ապա աշակերտի վարքը սկսում է պատճառավորվել (դեմոստրիացիա) իր ներքին մղումներից, որոնք որպես կանոն, կարող են լինել նաև բացասական: Բայց երբ նրա հոգում տիրապետող է դառնում դրա-

կան սիմվոլիկայի ու իդեալների մի ամբողջ համակարգ, երբ նա գիտակցում է, որ համուն այդ իդեալների չի կարող չպայքարել, այս դեպքում կանքն իր հսկողության տակ է վերցնում նրա վարքն ու մտածողությունը: Այս իմաստով ազգային ու բանակային սիմվոլիկայի առկայությունը կարող է ոգեշնչման անփոխարինելի աղբյուրի դեր կատարել:

Բանակում ծառայելու մշակույթի ձևավորումը կարող է լիարժեք կատարել ազգային ու բանակային սիմվոլիկայի գրագետ մատուցման միջոցով: Եվ դա հնարավոր է: Բուլղարական բանակում ընդունված կարգ կա. զորամասը շարում են զինվորների ու սպաների ներկայությունը ստուգելու համար: Ցուցակի սկզբում գրված են զոհվածների անունները: Հրամանատարը կարող է զոհվածի անունն ու ազգանունը, ապա առաջին շարքի առաջին զինվորը բարձրաձայն արձագանքում է՝ «ընկալվ», նրա կողքին կանգնած զինվորը գոչում է. «փառք հերոսին», որից հետո ողջ զորամասն է գոչում. «հավերժ փառք»: Եվ այսպես, մինչև հերթը հասնում է ողջերին:


Սա անցյալի հետ անձնական կապի առկայության գիտակցման ու անցյալին հաճելիորեն առերեսվելու երևույթն է: Սիմվոլային համակարգի օգնությամբ հիշողության վերադառնումները հանդես են գալիս իբրև ազգային ընդհանրության և ինքնության դրսևորումներ, որոնք սկսում են կատարել ներթմնիկական հարաբերությունները կառուցողի դեր: Այստեղ խոսքը խմբային պատկանելության դրական զգացման մասին է, ինչը խիստ անհրաժեշտ է հատկապես նախագորակոչային տարիքի դպրոցականների համար:

Այստեղ ուզում են նշել, թե ինչպես է Նժդեհը կառուցել իր հայոց ռազմագիտությունը: Հիմնվելով Մամիկոնյանների մշակած ռազմագիտության, ռազմարվեստի տեսության ու ռազմահոգեբանության վրա և դրանք հարստացնելով Ռուբինյան իշխանների, Լևոն Մեծագործի, Դավիթ Բեկի և 20-րդ դարի խոշոր հայրուկապետներ Անդրանիկի, Սեբաստացի Մուրադի, Եփրեմ համի, Համազասպի, Քեռու, Խեչոյի և ուրիշների մղած կռիվների, նաև Վանաձորի ու Ջանգեզուրի հերոսամարտերում կիրառած ռազմարվեստի վրա, Գարեգին Նժդեհը բյուրեղացրեց, հարստացրեց, ամբողջացրեց ու նոր բարձունքի բացարձակ հայոց ռազմագիտությունը, և այստեղ ևս ազգային սիմվոլների առկայությունն ակնհայտ է: Այդ ռազմագիտության առանցքը կրկին բարոյականությունն ու առաքիլությունն են, որոնք չեն կարող ձևավորվել առանց ազգային ու համամարդկային բարձր սիմվոլների, որոնք ամրապնդվում ու ենթագիտակցորեն ղեկավարում են մեր վարքը որպես կարևոր ներհոգեկան բովանդակություն:

ԵՐԿՐԱԳՆԴԻ ՎՐԱ ԱՐՑԱՒԻՑ ԼԱԿՏԵՐ ԶԿԱ

Օրերս Ասկերանի էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի տղաների և աղջիկների միջև տեղի ունեցավ խաղ-վիկտորինա աշխարհագրությունից՝ նվիրված կանանց տոներին: Միջոցառումը կազմակերպել էր աշխարհագրության ուսուցչուհի Մելանյա Սարգսյանը:

Դպրոցի տնօրեն Կառլեն Մայիլյանը, ողջունելով ներկաներին, մեկ անգամ ևս շնորհավորեց գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին՝ միանյակի առթիվ: Ինչպես նաև կարևորեց աշխարհագրության իմացությունը, նրա դերն ու նշանակությունը: Ապա վիկտորինայի կազմակերպիչը, հանդիսատեսին ներկայացնելով



ժյուրիի կազմը, բեմահարթակը տրամադրեց աղջիկների՝ «Կլիմա» և տղաների «Այսբերգ» թիմերին: Նշենք, որ երեխաներն ամենայն լրջությամբ էին պատրաստվել խաղին: Վաղօրոք իրենց թիմը խորհրդանշող պատի թերթեր էին պատրաստել: Տղաների թիմը խոստացավ ցուցաբերել սառը դատողություն և կրակոտ խաղ ու միմիայն հաղթանակ տանելու վճռականություն: Իսկ որպեսզի աղջիկները շատ չտխրեն, պարտության դեպքում նրանք մեկական ծաղիկներ նվիրեցին: Աղջիկներն էլ իրենց հերթին հույս հայտնեցին, որ իրենց կհաջողվի լավ խաղ ցուցադրել և «խալեցնել կանակոր այսբերգները»:

Մինչ թիմերը պատրաստվում էին խաղին, 6-րդ դասարանցի Յուլյա Հայրապետյանը հանդես եկավ մայրերին նվիրված երգով՝ էլ ավելի ջերմացնելով ներկաների հոգիները:

Ազդարարվեց 4 փուլից բաղկացած խաղի սկիզբը: Առաջին փուլում հնչեց 10 հարց. թիմերը պետք է ընտրեին 4 տարբերակներից ճիշտ պատասխանը: «Կլիմա» թիմը փոքր-ինչ անվճռական գործեց և թույլ տվեց երկու վրիպում: 1-ին փուլն ավարտվեց հօգուտ տղաների: 2-րդ փուլը, որ կոչվում էր թույլ օրակ, նույնպես ավարտվեց տղաների վաստակած միավորների առավելությամբ:

Նույն դասարանցի Լևոն Սարգսյանի՝ դարձյալ մայրերին նվիրված խաղաներեն երգի գեղեցիկ կատարմամբ երաժշտական դադարից հետո կայացավ խաղի 3-րդ փուլը: Այն աշխատանք էր քարտեզով: Սասնակիցները, վերցնելով առաջադրված տոմսը, պետք է քարտեզի վրա ցույց տային աշխարհագրական օբյեկտը: Առավել հետաքրքրական էր խաղի 4-րդ փուլը, ըստ որի, հանելուկների կռահմամբ խաղի մասնակիցները պետք է գտնեն գաղտնաբառը:

Անաչառ ժյուրիի անփոփոխ արդյունքներով 4 միավորի առավելությամբ հաղթեց «Այսբերգ» թիմը:

- Քանի որ տարին օլիմպիական է, ուստի հաղթանակած թիմին մենք որոշել ենք պարգևատրել օլիմպիական «մեդալներով», - ասաց Մ. Սարգսյանը:

«Մեդալները», որ պատրաստված էին Մ. Սարգսյանի մտահղացմամբ, ոսկեգույն փայլաթիթեղով փաթաթված շոկոլատե կլոր սալիկներից, հաղթողներին հանձնելու պատիվը տրվեց ժյուրիի անդամ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Երիկ Մելանյանին:

Ինչպես ասաց Մելանյա Սարգսյանը, ինչքան էլ երկրագունդը շրջենք, որտեղ էլ որ լինենք, միևնույն է, մեզ համար մեր հայրենի երկրից, մեր Արցախից լավ տեղ չկա, ուստի մեր երկրամասը պետք է ճանաչենք ու սիրենք ամեն ինչից առավել:

Միջոցառման վերջին նոտաները հնչեցրին օրվա հերոսները՝ «Ղարաբաղ» երգի հիանալի կատարմամբ:

Լուսինե ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
Յ. Գ. Թ.

Անահիտ ԳԵՏՐՈՍՅԱՆ

ՓՈՐՁ

ՀԱՍԿԱՆԱԼՈՎ ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՏԱՐԻԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Տարրական դասարաններում ուսուցումն իրականացվում է ընթերցանության միջոցով: Եթե երեխան լավ է տիրապետում ընթերցանության տեխնիկային, բանավոր և գրավոր խոսքին, սիրում է գիրքը, ապա նա կարող է ուսումնական տարբեր փուլերում հաջողությամբ յուրացնել ծրագրային նյութը:

Հասկանալով կարդալու համար աշակերտը պետք է տիրապետի կարդացածը վերլուծելու կարողությանը: Վերլուծելը թերևս այն կարևոր և բարդ կարողություններից մեկն է, որը և փորձում են ձևավորել տարրական դպրոցում: Ըստ ընթերցանության մեթոդիկայի՝ լավ ընթերցել հասկացությունը ենթադրում է հետևյալ բաղադրիչները.

- ճիշտ կամ անսխալ կարդալ,
- հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,
- վարժ կամ սահուն կարդալ,
- արտահայտիչ կարդալ,
- արագ կարդալ:

Այս հատկանիշների պահպանմամբ՝ ընթերցանությունը դառնում է ակտիվ գործընթաց, որն ստիպում է մտածել ընթերցվող նյութի մասին:

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակը կարդալ սովորեցնելն է և ընթերցողական կարողությունների ձևավորումը:

Ուսուցման սկզբնական փուլում հիմնական ուշադրությունը հատկացվում է հասկանալով կարդալու կարողության ձևավորմանը: Հարց է ծագում. ինչպե՞ս կարող է աշակերտը կարդալ և չհասկանալ իր ընթերցածը:

Ինչ կարող է անել ուսուցիչը՝ հասկանալով կարդալու կարողություններ մշակելու համար: Գիտակցորեն կամ հասկանալով կարդալ՝ նշանակում է կարդացածը հասկանալ, ճշտությամբ վերարտադրել՝ պահպանելով մտքերի հաջորդականությունը և տրամաբանական կապը: Կարդալը գիտակցական է այն ժամանակ, երբ կարդացողը ճիշտ և ամբողջությամբ հասկանում է իր կարդացածը, ասինքն՝ հասկանում է բնագրի բառերի իմաստը, նախադասությունների միտքը: Կարդալու և կարդացածը հասկանալու կարողության մշակումը բարդ և աշխատարար գործ է, և ուսուցիչը բավական ճիգ ու ջանք է պահանջում:

Կարդացածը հասկանալ՝ նշանակում է տեքստի մտքերը ներհյուսել տվյալ թեմայի վերաբերյալ իր իմացությանը, հաղորդվող տեղեկությունը կիրառել գործնականում, ինչպես նաև կարդացածին սեփական մեկնաբանությունը տալ: Ընթերցանության գործի կազմակերպումը և գործնական բնույթ ունի: Դրան մասնակցում են բոլոր աշակերտները: Այստեղ և աչքի առաջ պիտի ունենալ ընթերցանության միջոցով որոշակի կարողություններ և հմտություններ մշակելու, սովորածը կյանքին կապելու կարևորագույն խնդիրները: Ընթերցանության դասերը լայն հնարավորություն են ընձեռում կարդալու դրական հատկանիշները բարելավելու համար: Եթե տարրական դասարաններում աշակերտը սահուն կարդալուն չի վարժվում, գրքին այլևս չի կապվում: Դրա համար ուսուցիչը պետք է ժամանակ տրամադրի և համբերատար լինի, քաջալերի յուրաքանչյուր երեխայի բարձրաձայն ընթերցանությունը, դասարանի հետ ներդաշնակ և համերաշխ աշխատելու ձգտումը: Այդ կարողությունների մշակումը դառնում է տարրական դպրոցի ընթերցանության դասի գերխնդիրը, որը հետագա օղակներում դառնում է գիտելիքների ձեռքբերման միջոց: Աշակերտներին հասկանալով կարդալ սովորեցնելու համար արակտիկայում գործածվում են բազմաթիվ հնարներ: Մասնավորապես արդյունավետ է հատված առ հատված կարդալը և զույգերով մեկնաբանելը (իրար կողքի նստած), կարդացածի բովանդակության շուրջ գրուցելը, իրար պատմելն ու դասողություններ անելը: Շահեկան է նաև կարդալ համեմատարելուց առաջ բնագրի վերաբերյալ որոշակի առաջադրանքներ տալը, ընտրովի ընթերցանության տարաբնույթ միջոցների կիրառությունը, հատվածաբար կարդալն ու այդ հատվածի հիմնական բովանդակության վերլուծությունը: Հասկանալով կարդալու ուղղությամբ անհրաժեշտ է տանել անընդհատ վերընթերցում է նույնը, այդ ճանապարհով ստուգում է իր վարկածը, փորձում է իմաստավորել, հասկանալ իր ստացած տեղեկությունը: Արդյունքում ընթերցող աշակերտը ոչ թե պասիվորեն ընկալում է այն, ինչ կարդում է, այլ իր վրա է վերցնում «կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը»: Բացատրական ընթերցանության մեթոդի «Աշխատանք բնագրի վրա» բաղադրամասի մեթոդապետ ճիշտ իրականացումը լուծում է հենց այս կարևոր խնդիրը: Այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով ու կենսափորձով, այնպես էլ ուսուցչի՝ նախապես մշակված հարցերով, ստեղծված երկխոսություններով, կարդացած ստեղծագործությամբ մտքերի բացահայտման ձևերով, հենակետային բառերի ճիշտ ընտրությամբ: Այս կարևոր բաղադրիչների առկայությունը կարող է խթանել, որ աշակերտը,

կարդացածն իր կենսափորձով իմաստավորելով, հասկանա, ընկալի, յուրացնի և դարձնի իրենը:

Ընտրովի ընթերցանությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի միջոցով, որոնք աշակերտից պահանջում են ոչ թե մեխանիկորեն կարդալ անհրաժեշտ հատվածը, այլ նրան մտածել են տալիս կարդացածի շուրջ: Օրինակ՝ «Երեք արջերի» հեքիաթն ընտրովի ընթերցելու ժամանակ կարելի է տալ այսպիսի հարցեր և առաջադրանքներ.

- Ընտրեք և կարդացեք ամենից շատ ձեզ դուր եկած հատվածը:

- Կարդացեք հեքիաթի այն հատվածը, որտեղ նկարագրվում է մոլորված աղջկա վիճակը:

- Ինչպիսի՞ն էր աղջիկը (համարձակ, անվախ), ինչի՞ց իմացաք:

- Ո՞ր տողերն ընթերցելիս դուք այդ տպավորությունը ստացաք: Կարդացեք այդ հատվածը:

- Կարդացեք այդ հատվածը, որտեղ նկարագրվում է արջերի տմայկը:

- Ընթերցեք այն տեղերը, որտեղ նկարագրվում է աղջկա բարձր տրամադրությունը:

- Ինչպիսի՞ն էն արջերը: Հիմնավորեք պատասխանը՝ ընթերցելով համապատասխան տողերը:

- Ընթերցեք այն հատվածը, որտեղ երևում է արջերի վերաբերմունքն աղջկա արածներից: Բացատրելով կամ մեկնաբանելով կարդալն իրագործվում է մի քանի ձևով. բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով հերոսների վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն: Այս աշխատանքները նպաստում են նյութի բովանդակությունը հասկանալուն, կարդալու կարողության կատարելագործմանը, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը:

Ստորև ներկայացնում ենք աշակերտների հասկանալով կարդալու կարողությունները զարգացնող դասի պլան-սեղմագիր:

Պլան-սեղմագիր

2-րդ դասարանում «Մայրենի» առարկայից անցկացվող դասի:

Հին դասի թեման - Երեք արջի հեքիաթը (I մաս)
Նոր դասի թեման - Երեք արջի հեքիաթը (II մաս)

Դասի կահավորումը - Սիրված հեքիաթների պատասխաններ, նկարներ, քարտեր՝ խմբային աշխատանքների համար:

Օգտագործվող մեթոդներ - «Մտազրոհ», «Բանալի բառեր» «Կանխագուշակում», «Ուղղորդված ընթերցանություն», «Քառաբաժան», «Աբրոստիկոս»:

Դասի նպատակը - Ուղղորդված ընթերցանության մեթոդի կիրառմամբ զարգացնել նոր նյութի վրա աշխատելու, վարժ, սահուն, հասկանալով կարդալու, կարդացածը պատմելու, բնագրի շարունակությունը գուշակելու կարողություն:

- Բանավոր խոսքի զարգացում:

- Կարծիքների և մտքերի արտահայտման հնարավորության ստեղծում:


- Կենդանիների վերաբերյալ գիտելիքների ամրապնդում:

- Լսել ընկերոջ խոսքը, բանավիճել, կարևորել բարոյական չափանիշները:

- Ամրակայել «Առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող», «Նախադասություն» լեզվական թեմաները:

Դասի ընթացքը

Աշակերտներին առաջարկել թվարկել այն բառերը, որոնք բնութագրում են հեքիաթ բառը (մտազրոհ):



- Ի՞նչ է հեքիաթը:
- Ի՞նչ հեքիաթներ գիտենք:
- Ինչպե՞ս են սկսվում հեքիաթները:
- Ո՞րն է այսօրվա մեր հեքիաթը:

- Ո՞ր կենդանու մասին է խոսվում հեքիաթում:

- Ինչպիսի՞ կենդանի է արջը:

- Ի՞նչ գիտենք արջերի մասին:
Հին դասարանի ընտրովի հարցում:
Ամփոփել հարցերով.

- Ի՞նչ արեց մոլորված աղջիկը:

- Աղջիկը ինչո՞ւ չի ուտում մեծ, միջակ ամաններից:

- Ճի՞շտ վարվեց աղջիկը: Ինչո՞ւ:
Իմաստի ընկալում - (Նոր նյութի հաղորդում) - Ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով.

I կանգառ

Հենակետային բառեր Անձանոթ բառեր
- աթոռ, մեծ, փոքր,
- միջակ, աման, գդալ
Հարցեր.

- Ի՞նչ է տեսնում աղջիկը տնակում:
- Ո՞ր աթոռին է նստում աղջիկը:

II կանգառ

Հենակետային բառեր Անձանոթ բառեր
- Մահճակալ, լայն,
- Բարձր, պառկել
Հարցեր.

- Ինչո՞ւ է կոտորվում աթոռը:
- Ո՞ր մահճակալին է պառկում աղջիկը:

III կանգառ

Հենակետային բառեր Անձանոթ բառեր
- քաղցած, ճաշ, հայր, զարհուրելի, սարսափելի,
- մայր, քոթոթ, գոռալ, ահարկու, վախենալի
փնթիմբալ.

IV կանգառ

Հենակետային բառեր Անձանոթ բառեր
- քաղցած, ճաշ, հայր, զարհուրելի, սարսափելի,
- մայր, քոթոթ, գոռալ, ահարկու, վախենալի
փնթիմբալ.

Հանձնարարել յուրաքանչյուր կանգառի բառերով բնագրի շուրջ կազմել նախադասություններ: Կսովորեն համառոտ պատմել հատվածները, և նոր նյութը աշակերտները սովորում են դասարանում:

Հանձնարարել նկարել՝ ըստ ընկալման՝ առարկայական ինտեգրումն ապահովելու համար: Այդ նկարները տանը ավարտելով (առանց որևէ մեկի միջնորդության), վերևի մասում ցանկալի է գրել տալ ստեղծագործության անվանումը, հեղինակի անուն-ազգանունը, իսկ ներքևի մասում՝ աշակերտի անուն-ազգանունը և այն կախել թեմատիկ անկյան պատուառին: Դրանով հեշտանում, նպատակային և արդյունավետ է դառնում թեմատիկ բանավոր հարցման գործընթացը:

Հարցեր.

- Անվանել «քաղցած» բառի հոմանիշը:
Քաղցած-սոված, անոթի

- Ի՞նչ նկատեցին սոված արջերը:
- Աղջիկը տնակում ի՞նչ առարկաներ տեսավ:

աման	սպասք	աթոռ	կահույք
գդալ		մահճակալ	
- Ի՞նչ կասեք այդ բառերի մասին:			
- Ձեր կարծիքով ճի՞շտ վարվեց աղջիկը: Ինչո՞ւ: Ինչ կարծում, աղջիկը կուղղի՞ իր սխալը, թե նույնը կշարունակի:			

Խմբային աշխատանք

I խումբ - Կազմել բառակապակցություններ «արջ» բառով

II խումբ - Շարունակել /առ.2/

III խումբ - Հնչյունները փոխելով, կազմել նոր բառեր

IV խումբ - Գրել աբրոստիկոս «հեքիաթ» բառով

V խումբ - Լրացնել բաց թողնված տառերը:

Կշառադատում

Ամփոփումն իրականացնել քառաբաժան մեթոդով:
Ի՞նչ զգացինք - վախ, չարություն, հիասթափություն
Ի՞նչ տեսանք - անտառ, տնակ, անխիղճ վերաբերմունք
Ի՞նչ լսեցինք - ճռռոց, գոռոց, աղմուկ, մրթմրթոց
Նոր վերնագիր - Քաղցած արջերը:
Ինչպե՞ս են ավարտվում հեքիաթները:
Դասն ավարտել «Հեքիաթ» երգով:

Տնային աշխատանք - Բնագիրը կարդալ արտահայտիչ և պատմել:

Ջեննա ԳԱՍՊԱՐՅԱՆ
Հաղորդօր Ԅ. Մանվելյանի անվ.
միջն. դպրոցի դասվար

ԿԱՍՈՒՐԶ

ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԸ ԵՐԿՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԴՐԿԱՅ Է

Անժամոթ հեռախոսագանգը սկզբում զարմանք, ապա ուրախություն ու բերկրանք պարզեց մեր՝ Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվի անդամներից յուրաքանչյուրին: Յուրաքանչյուրը Գրանցում էր Կ. Գրանցում էր Կ. Գրանցում էր...

մություն ունի: Ընթացյալի առկա խնդիրները չեն խանգարում, որ դպրոցի հմուտ մանկավարժների շնորհիվ ժամանակակից մեթոդներով, տեխնիկական հագեցվածությամբ կազմակերպվի յուրաքանչյուր պարապմունք, դասը ծառայի իր նպատակին: Դրանում համոզվեցինք հաջորդ օրը, երբ, պայմանավորվածությամբ համաձայն, մենք՝ առարկայական ուսուցիչներ, մերկայացանք դասախոսների: Դասը հիմնականում աշակերտակենտրոն էր, կազմակերպված խմբային մեթոդներով, զուգակցված նորը ավանդականին, ինքնատիպ՝ կառուցվածքով: Աշակերտների խոսքը հղկված է, ազատ կարողանում են կարծիք հայտնել, արտահայտել սեփական տեսակետներ:

ապահովելու: Խնդիրներն առկա են երկու դպրոցներում էլ. համատեղ ուրվագծվեցին կատարվող աշխատանքներին հասնելու ուղիները:

Ի նշան երկու դպրոցների բարեկամության և համագործակցության մեր կոլեկտիվի կողմից քույր դպրոցին նվիրեցինք Արցախի և Մայր Հայաստանի միասնությունն արտահայտող խորհրդանշական հուշանվեր և տողերիս հեղինակի՝ «Ֆիզիկական դասերին և դասերից դուրս» մեթոդական ձեռնարկը, որում տեղ են գտել աշխարհառջակ աստղագետ Վ. Համբարձումյանին նվիրված օրհներգ (ի դեպ, մեր դպրոցում յուրաքանչյուր աստղագիտության դաս աշակերտները սկսում են այդ օրհներգով) և նրան ծոնված տողեր:

Երևանի հ. 12 հիմնական դպրոցի կողմից հաճելի անակնկալ էր սպասվում: Նվեր ստացանք համաձայն երգահան Ա. Խաչատրյանի մասին նկատագրող գիրք՝ բացատրական նյութերով և ծայրասկզբաբաշխ: Հետո խմբային լուսանկարներ, լուսանկարներ...

Իսկ բարեկամական ճաշկերույթի, սուրճի ու թեյի սեղանի շուրջ իշխող ջերմ ու մտերմիկ մթնոլորտը բոլորիս համար մեղմիկ զրույցի, մոտիկից ծանոթանալու հարմար առիթ էր:

Հանդիպումը, բարեկամական այցը խորհրդանշական էր. դրվեց երկու դպրոցների բարեկամության, համագործակցության հիմնաքարը, որով պայմանավորված է մեր հետագա աշխատանքի հաջողությունը: Այն աշխատանքի, որին կղջված ենք ի պաշտոնե՝ կրթել ու դաստիարակել արյան գնով ձեռք բերած մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը պահող ու պաշտպանող արժանի սերունդ:

Համոզված են, որ մեր բարեկամությունը կլինի անո՛ւր-անո՛ւր, շարունակական, նպատակային՝ գեղեցիկ և ուսանելի ավանդույթներով լեցուն:

Հաջորդ հանդիպումն ակնկալվում է մեր դպրոցում: Հուսով ենք, որ երևանի մեր գործընկերներն ընդունելով մեր հրավերը, առաջին իսկ հնարավորության դեպքում կայցելեն հերոսներ ծնած ու սնած, հերոսների արյամբ հերոսացած քաղաքամայր Ստեփանակերտ, մեր հյուրընկալ դպրոցը...

Մեր հիմնական առաքելությունն ավարտած համարելով՝ եղանք Գառնիում, Գեղարդում, Թումանյանի տուն-թանգարանում: Դժվար է բառերով նկարագրել մեր հիացմունքն ու ոգևորությունը այդ հիշարժան վայրերն այցելելիս: Ամենայն հայցը բանաստեղծի տուն-թանգարանում մեզ հաճելի անակնկալ էր սպասվում. թանգարանի ուղեվար Անահիտ Մկրտչյանը, իմանալով մեր դարաբաղի լինելը, Մեծ Լուռեցու անցած ուղուն ծանոթացնելուց հետո մեզ հրավիրեց մի սենյակ, ուր սեղան էր գցված: Այդ օրը՝ մարտի 23-ին, Մեծն Թումանյանի մահվան տարելիցն էր: Կարմիր գինով ողորմաբաթ բարձրացրինք անմահ բանաստեղծի հիշատակին՝ մեղմիկ, որ իր գործով, իր թողածով Թումանյանն ապրում է ու անմահ է...

Իսկ Հայաստանի հանրապետության անվան տիկական թատրոնում Պարույր Սևակի խոսքերով գրված «Անվերջ վերադարձ» ֆանտաստիկա-բեմադրությունը մի հայտնություն էր մեզ համար, փիլիսոփայական մի անորոշության վերածնունդ անվանի դերասաններ Արթուր Ութմազյանի, Լուսինա Դամբարյանի, Ռիչարդ Մադենյանի և այլոց կողմից: Ուղղակի ապշած էինք ու ազդված նրանց վարպետորեն ներկայացված խաղից...

Տունդարձի ճանապարհին մեզ սպասում էր Նորավանքը՝ հպարտորեն բազմած սեզ լեռների ուսին: Վերջապույսի շողերը մարմանդ փայլում էին վանքի գմբեթին՝ ձգտելով ներս սողոկել նեղիկ պատուհանի միջով ու պարուրել վանքի ներսի պատին ուրվագծված Տեր Հիսուս Քրիստոսի դիմագիծը...

Վանքի շրջակա բնության վայրի գեղեցկությունը, գունարվելով դրան, ավելի էր իմաստավորում մեր ճամփորդության երեք օրերի խորհուրդը:

Աստօծ նախախնամությամբ ու մեր ցանկությամբ իրագործվեց մեր սուրբ առաքելությունը՝ համուն մեր երեխաների, հանուն վաղվա ու ապագայի:

Էլմիրա ԳԱՐՐԻԵԼՅԱՆ Սյրեփ. հ. 12 հիմն. դպրոցի րևոթեն

ԳԱՐՈՒՆԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Գարուն է արդեն, ամենուրեք ծաղիկ, ժպիտ, շողացող արև: Գարնան առաջին տոներին է Մարտի 8-ը՝ Մայրության, գեղեցկության, սիրո, բերկրանքի, կանանց մեծարման օրը, որն ամեն տեղ մշակվում է մեծ հանդիսավորությամբ, և այդ մեծ ու գեղեցիկ տոնին անմասն չէին մնացել Շուշիի և Արևիկայի անվան հիմնական դպրոցի 3-րդ «ա» դասարանի աշակերտները:

Մարտի 15-ին տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված կանանց միասնականին, որին մասնակցում էին 3-րդ դասարանի դասավար Գոհար Սարգսյանի գլխավորությամբ:



Երեխաներն իրենց երգ ու պարով, ասույթներով, թևավոր խոսքերով մեծ բավականություն ու հիացմունք պարզեցին հանդիսատեսին, ու դժվար թե գտնվեր մեկը, որ չհիանար այդ փոքրիկ «իրեշտակների» կատարումից: Նրանց ամեն մի խոսք, ժպիտ ու շարժում անկեղծ էր ու հուզիչ:

Շրագրի թեման ճոխ էր՝ համալրված խրատներով, հայրենիքի ու մոր փառաբանումով: Բացման խոսքը դպրոցի ուսուցչուհի, 2-րդ «բ» դասարանի դասավար Ինեսա Պետրոսյանի շնորհավորանքն ու բարեմաղթանքն էր:

Միջոցառման կայացմանը մեծ աջակցություն են ունեցել դպրոցի երգերաժառանգության ուսուցչուհի Ա. Ջաքարյանը, կազմակերպիչ Գ. Սարգսյանը: Պարզ երևում էր, որ ամեն մեկն իր ուժերի ներածին չափով փորձել էր ինչ-որ բանով նպաստել միջոցառման կայացմանը:

Այդ գեղեցիկ ու զարմանաբեր տոնն ուղղորդվում էր արևի շողերով, ծաղիկներով, մոմի լույսի ուղեկցությամբ, որն ավելի զգացմունքային ու տպավորիչ դարձրեց միջոցառումը: Վերջում շնորհավորանքի խոսք ասաց դպրոցի տնօրեն, ԼՂՀ վաստակավոր ուսուցչուհի Նազիկ Նալբանդյանը՝ շնորհակալություն հայտնելով աշակերտներին, կազմակերպիչներին և դասավար Գ. Սարգսյանին:

Մենք ևս միանում ենք ձեր բոլոր մաղթանքներին ու շնորհավորանքներին, 3-րդ «ա» դասարանի ծնողների անունից շնորհակալություն ենք հայտնում Ձեզ՝ Ձեր անձնվեր և անզահատելի աշխատանքի համար: Հանձնիս Ձեզ, տիկին Սարգսյան, շնորհավորում ենք կանանց. մաղթում հարատև սեր ու ջերմություն, ձեր գարունները գան ու չզգան, միշտ բարուրվեք զարնամային ջերմ արևի շողերով ու ժպիտներով:

Մերի ԽԱՉԱՏՐՅԱՆ Շուշիի Մ. Խանդամիրյանի անվան թատրոնի դերասանուհի



կայքերից: Դասն անցկացվեց հիմնականում աշակերտների միջոցով, բոլորն ընդգրկվեցին դասապրոցեսին և անփոփեցին օրվա սովորած նյութը: Այն նպատակային էր և ուսանելի:

Իսկ 9-րդ դասարանում գրականությունից կազմակերպված դասը (ուսուցչուհի՝ Ռիմա Երիցյան) սկսվեց Հ. Շիրազի «Դարաբաղի ողբը» բանաստեղծության արտասանությամբ, չնայած օրվա նյութը Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանին» էր:

Ուսուցչուհին, գործի դնելով իր մանկավարժական վարպետությունը, կարողացավ աշակերտների գաղափարին հասցնել Հայաստանի հին ու նոր «վերքը», շարկապեց այն մերօրյա հայոց մեծ հարցին ու դասն ավարտին հասցրեց «Ողբ»-ի վերջին քառատողի խմբային կատարմամբ: Հուզիչ էր, ուսանելի, զնահատանքի արժանի:

Ուսուցչուհի Արմինե Քոչարյանի համաձայնությամբ դասը վարեց մեր դպրոցի պատմության ուսուցչուհի Կարինե Դադայանը, ով շեղվելով բուն թեմայից, կրկին հաստատելով Արցախի և Մայր Հայաստանի միասնությունը, ներկայացրեց Վաչե և Վաչագան թագավորներին, Ավարայրի ճակատամարտի մասնակից ու հերոս արցախցի Բաթ իշխանին, լրացուցիչ տեղեկություններ հայտնեց Արցախ աշխարհի մասին: Աշակերտների համար անչափ հետաքրքիր էր ու տպավորիչ:

Ուսաց լեզվի ժամին աշակերտները հիացրին իրենց գիտելիքներով: Թվում էր՝ այդ մի դասաժամի ընթացքում իրար էին միահյուսվել մեր հերոսների կյանքի գնով ձեռք բերված խաղաղությունը, ջերմ շողեր պարզադող արևն ու ուսուցչուհու աչքերի փայլը ու բարությունը:

Կատարեցինք մտքերի փոխանակում ուսման ավելի բարձր առաջադիմության հասնելու, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերության, դպրոցընտանիք կապն ամրապնդելու, ուսուցման նոր մեթոդների, ուսումնական դասագրքերում, առանձին թեմաներում տեղ գտած թերություններին մասին: Տնօրեններիս զրույցն այսօրվա դպրոցի առջև ծառայած խնդիրների մասին էր՝ առավելապես ուսման հանդեպ սերն ու հետաքրքրությունը կորցնելու միտում ունեցող աշակերտներին դեպի գիրքը, դեպի դպրոցը հետ բերելու, սովորողների ուսուցումն առավել բարձր մակարդակով կազմակերպելու, ուսման բարձր որակ

Անկարագրելի են այն ապրումներն ու զգացումները, որ ունեցանք Ա. Բակունցի, Պ. Սևակի տուն-թանգարաններն այցելելիս:

Յողաթաթախ կանաչների միջից ամուշ ծաղտացող պալիական մանուշակների բուրմունքն ընթրչխնած, մեծն Սևակի կենդանի ծայնի էլեկտրոն ունկներումս՝ շարժվեցինք առաջ, դեպի մի սրբատեղի՝ Սպարապետ Վազգեն Սարգսյանի թանգարանը: Այստեղ ավելի խորը գիտակցեցինք, թե ինչ է իսկական հայրենասիրությունը, նվիրվածությունը ազգին ու գաղափարին: Որ «Ազգային գաղափարախոսությունը Ավարայրն է, Սարդարապատը, Բաշ Ապարանը, Շուշին: Նաև Դեր Ջորն ու աշխարհասփյուռ հայության ինքնապահպանման անխորտակ ուժը»:

Կարծես Մեծն Սպարապետն իր խստաբարո հայացքով դիմում էր հենց մեզ՝ մանկավարժներին, ասելով՝ «Մեր մատաղ սերունդը պիտի դաստիարակվի ազգային գաղափարներով: Առաջին դասարանից մեր երեխան պիտի իմանա, թե ինքն ով է, ինչ պատմություն ունի, ինչ պիտի անի և ուր պիտի գնա...»:

Մենք սրբությանը կատարում ենք քո պատգամները, Սպարապետ, դու բարձրից հսկիր մեր տարածքները, հայացքդ որպես սրածայր նետ՝ մխրճելով թշնամու թիկունքը դաժան...

Ահա սպիտակափառ լեռը հայոց, մեր ցավն ու ողբը, մեր տենչն ու հոգին, մեր Սիսն ու Մասիսը... Այնքան հեռո՛ւ և այսքան մո՛տ: Ահա Խոր Վիրապը: Թվում է՝ այստեղից ձեռքդ երկարես՝ կհասնի Մասիսի կատարին: Իսկ փշալարից այն կողմ թուրքն է, որ գերել է մեր գեղեցկուհուն ու մեր անեծքն է անվերջ «վայելում»...

Երեկոյան հյուրընկալվեցինք «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում՝ հաջորդ օրը մեր հիմնական առաքելությունն իրականացնելու նպատակով:

Հուզառատ էր հանդիպումը, տպավորիչ: Այնքան ջերմ էր մթնոլորտը, տրամադրող ու հյուրընկալ, որ թվում էր, թե հարյուր տարվա բարեկամներ ենք ու վաղուց ճանաչում ենք միմյանց:

Երևանի Վ. Համբարձումյանի անվան հ. 12 հիմնական դպրոցի բակում մեզ դիմավորեցին տնօրեն Վլադիմիր Ստեփանյանը, փոխտնօրեններ Թերեզա Հովհաննիսյանը, Անժելա Ավետիսյանը, Նելլի Նիկողոսյանը, պահեստազորի կապիտան, զինղեկ Վալերի Պոչինսկին: Տնօրենը սիրալիք ծանոթացրեց դպրոցի ներքին և արտաքին կյանքին, դասասենյակներին, կաթնհետներին: Նախկին ռուսական դպրոցը վաղեմի պատ-

ԱՐՑԱՆ-ՇԱՅԱՍՏԱՆ

ՄԵԶ ԲԻՆՏ Է ՊԵՏՔ

1988-89 թվականներն են: Ստեփանակերտում կիզիչ արև է, բայց մարդիկ, սրբելով դեմքերից հոսող առատ քրտինքը, պտտվում են քաղաքում՝ վանկարկելով՝ Հա-յաստան, մի-ա-ցում: Ով չէր միանում հոսանքին՝ մերժվում էր հասարակության կողմից, և այդ անձը հաջորդ օրը մարդկանց շարքերում չէր: Մանկապարտեզներն աշխատում են, բայց սննդի դեֆիցիտ է նկատվում: Առաջարկեցի քաղաքապետին վարիչ Հ. Ասրյանին ինձ գործուղել Երևան՝ հարցին լուծում տալու:

Գնացի: Երևանի գործկոմի նախագահի մոտ եմ: Ներկայացրի մանկապարտեզներում և դպրոցներում տիրող վիճակը: Երկար լռեց: Հետո կանչեց տեղակալին և հանձնարարեց օրվա երկրորդ կեսին խորհրդակցության հրավիրել քաղաքի խոշոր գործարանների բոլոր տնօրեններին, ինձ էլ խնդրեց կազմել քաղաքի դպրոցների և մանկապարտեզների ցուցակները: Խորհրդակցությունը սկսվեց ժամը 15.00-ին: Ես նորից ներկայացրի մեր վիճակը: Սկսվեց քննարկումը: Բոլորը ոգևորված էին և պատրաստակամ օգնելու: Երևանի միտինգներում նրանց այնքան էլ չէին ընդգրկում՝ հաշվելով իշխանության ներկայացուցիչներ: Այժմ պատեհ առիթ էր ներկայացնել՝ ցույց տալու իրենց հայրենասիրությունը և մասնակցելու Շարժմանը: Վերցրին ցուցակը, և ամեն մեկը վերցրեց մի մանկապարտեզ կամ դպրոց իր հովանավորության տակ: Իմ մանկապարտեզը վերցրեց Չարբախի փափուկ կահույքի ֆաբրիկան: Գործկոմի նախագահն ամմիջապես կապվեց «Երեբունի» օդանավակայանի հետ և լուծեց բեռնատար ուղղաթիռների հարցը: Օգնության հսկա ալիքը հաջորդ օրվանից պետք է մեկնարկեր: Ձանգեցի «Ամարասի» վարչություն, զգուշացրի, որ տղաներ և տեխնիկա ուղարկեն խոջալուի օդանավակայան՝ ուղղաթիռները բեռնաթափելու: Իսկ հաջորդ օրը գնացի իմ մանկապարտեզի շեֆի մոտ և հայտնաբերեցի մի հրաշալի, հայրենասեր հայի, որն ինձ տարավ պահեստ՝ առանձնացրած օգնությունը ցույց տալու: Պարկերով տարբեր տեսակի սննդամթերքներ էին, խաղալիքներ, սպասք, մույնիսկ մանկական շորեր: Աչքս ընկավ պահեստի խորքում դրված հսկա տակառի չափ փաթեթած սպիտակ մաշկայի կույտին: Տնօրենից, որի ազգանունը Ղազարյան էր, խնդրեցի այդ ամբողջ մաշկային ուղարկել Ստեփանակերտ: Նա զարմացած, հարցական հայացքով նայեց ինձ: Ես կարճ բացատրեցի, որ մեզ շատ բինտ պետք կգա: Խեղճ մարդը թուլացած նստեց.

- Դուք այդպե՞ս եք կարծում:

Ես լռեցի, որը պատասխան էր նրա հարցի: Նա կանչեց ցեխերի վարիչներին և հրամայեց բերել քաղաքաշտապանության համար հատկացված առաջին օգնության բոլոր դեղորայքերը և հակազագերը: Մի ակնթարթում սամիտարական օգնության մի ամբողջ բեռ հավաքվեց: Անմոռանալի էր, երբ արհմիության տարիքով մախազահը գրպանից հանեց վոլիդոլի հաբերը և խառնեց ընդհանուր դեղերին:

Ես վերադարձա Ստեփանակերտ: Ամեն օր վայրէջք էին կատարում մի քանի ուղղաթիռներ և բերում ինչ ասես, որոնք բաժանվում էին մանկապարտեզներին ու դպրոցներին: Իսկ մաշկային... Մտտեցի աշխատակիցներին, զուլակների վերածեցին, փաթեթեցիքը և որպես բինտ, պահեստավորեցիք: Ես մայում էի սպիտակ կույտին և խնդրում Աստծուն.

- Տեր, այնպես արա, որ սրանց կարիքը չլինի: Բայց ավա՛ր...

Անցավ երկի մեկ ամիս: Նորից Երևանում էի, այժմ ուրիշ առաջադրանքով և որոշեցի գնալ կահույքի ֆաբրիկա: Մուտքից մտա ներս և հանկարծակիի եկած՝ կանգնեցի: Դիմացի պատին սև ժապավենի երիզով Ղազարյանի դիմանկարն էր: Հանկարծամահ էր եղել: Քարտուղարուհին արտասվելով պատմում էր.

- Շատ էր զարմացել Ձեզ վրա: Ասում էր՝ այնպիսի հանգստությամբ ու սառնությամբ ասաց բինտը պետք կգա, որ մարմինս փշաքաղվեց:

Խեղճ Ղազարյան, ինչ կար զարմանալու, ավար մենք գայլի բաց երախն արդեն տեսել էինք, չէ՞:

ԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Լրացավ հայ ականավոր բանաստեղծ, գրող, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Պարույր Սևակի ծննդյան 90-ամյակը:

ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանի հովանավորությամբ ՀՀ մեկնած Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների մի խումբ աշակերտներ և ուսուցիչներ քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի պետ Կ. Մարգարյանի միջամտությամբ և մեթոդիստ Անահիտ Մետրոպոլիտի ղեկավարությամբ ներկա եղան Պարույր Սևակի 90-ամյա հոբելյանին նվիրված գրական-երաժշտական միջոցառմանը: Այն տեղի ունեցավ մարտի 12-ին, Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիվ Աբրահամյանի բարձր հովանու ներքո, ով անձամբ ներկա էր երեկոյին:

Միջոցառումը դաստիարակչական բնույթի բազմաթիվ ստեղծագործություններ էր ընդգրկում: Այն մեր մեծերին ներկայացնելու, մայրենին անաղարտ պահելու ևս մի առիթ էր: Հնչեցին անվանի գրողի մի քանի տասնյակ բանաստեղծություններ, հատվածներ պոեմներից, նրա ստեղծագործությունների հիման վրա ստեղծված երգեր, մեր մեծերի երախտագիտության ու գնահատանքի խոսքերը՝ նվիրված Սևակին: Տեղի է մեջբերել կաթողիկոս Վազգեն Առաքինի տողերը. «Ինչպե՞ս կարելի է Պարույր Սևակի գերեզմանի առաջ չհավատալ հոգու անմահությանը... Պարույր Սևակի ծնունդը մեր կյանքի, մեր մշակույթի, մեր ներկայի ու մեր ապագայի համար եղավ ճշմարտապես մի եղիցի լույս: Պարույր Սևակն այնպիսիներից եղավ, որ պիտի ապրի այնքան ժամանակ, ինչքան ժամանակ պիտի ապրի հայ ժողովուրդը, իսկ հայ ժողովուրդը անմահներից մեկն է աշխարհում...»:

Ասումը ներկա վարպետությամբ ներկայացրին հիացմունք պատճառեցին ինչպես ՀՀ վաստակավոր արտիստները, այնպես էլ երիտասարդ կատարողները (Գրետա Մեջլումյան, Սիլվա Յուզբաշյան, Արթուր Ութմազյան, Հրաչուհի Ութմազյան, Արսեն Ղազարյան և ուրիշներ): Հուրախություն ներկայացրին՝ երեկոն վարում էր հաղորդավար, թարգմանիչ և դերասան Սարգիս Նաջարյանը:

Մեծ հայի 90-ամյա հոբելյանին նվիրված երեկոն խորհրդավոր էր նույնքան, որքան ինքը՝ գրողը: Բոլոր ժամանակների մարդուն հուզող հարցերի շուրջ գրողի փիլիսոփայական խոհերն ու ընդհանրացումները, սիրո ու կարոտի պարզևած երջանիկ ապրումներն ու տառապանքի ստվերները, ծով մեղքերով ծանրաբեռնված մարդու կասկածներով ու ներման արժանանալու աղերսագին աղոթքներով լի տողերը հնչեցին սևակյան պոեզիային բնորոշ անմիջականությամբ:

Երեք ժամից ավելի տևած գրական-երաժշտական երեկոյին ասես հոգեպես ներկա էր ինքը՝ մեծն Սևակը: Մեզ թվում էր՝ վարպետ ասումը բոլորի շուրթերով տաղանդավոր գրողը գրուցում է մեզանից յուրաքանչյուրի հետ և ազնիվ ու շիտակ ապրելու, հայրենիքը պաշտելու ու պաշտպանելու խորհուրդներ ու խրատներ էր տալիս: Գրական-երաժշտական միջոցառման ավարտից հետո վաղեմի բարեկամներից մեզ մեծ ուրախությամբ դիմավորեցին և հյուրընկալեցին «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները:

Վաղ առավոտյան մեր աշակերտները մեծ ոգևորությամբ և հետաքրքրությամբ շրջեցին կրթահամալիրի դպրոցներում, ծանոթացան սեբաստացիների առօրյա-

յին, ընկերական հարաբերություններ հաստատեցին կրթահամալիրի սաների հետ, մասնակցեցին բարձր տրամադրություն ստեղծող, երգով ու պարով ուղեկցվող առավոտյան լիցքային վարժություններին: Քանի որ կրթահամալիրում Չարենցյան օրեր էին հայտարարված, կրթահամալիրի աշակերտների հետ համատեղ կազմակերպվեց գրական-գեղարվեստական ցերեկույթ, որի ժամանակ մեր աշակերտները ցուցաբերեցին մեծ ակտիվություն: Ավանդական «Քոչարին» էլ ավելի ամրապնդեց նորաստեղծ ընկերությունը: Կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը շնորհակալագիր հանձնեց Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի մեթոդիստ Անահիտ Մետրոպոլիտին՝ կրթահամալիրի և Արցախի հանրակրթական դպրոցների միջև գործունե կապեր հաստատելու անհատական ջանքերի համար:



Երկրագիտական թանգարանում մեզ ջերմությամբ ողջունեցին և հաճելի ժամանց մարդեցին:

Ամերիկահայ բարերար Արա Դիլիյանի նվիրատվությամբ ստեղծված Հանքաքարերի սրահում բազմաբնույթ ու բազմերանգ քարերի ու մետաղների տոնհիսնադես էր. ամետիստ, ալմաստ, սաթ, բնածին արծաթ, ծովափղի ժանիք, բնածին պղինձ,



գույնզգույն նռնաքարեր, փիրուզ, պիրիտ, հալիթ, ոսկի... Մեր ուշադրությունը հատկապես գրավեց Սիբիրում ընկած 37 կիլոգրամանոց երկնաքարը: Կից սրահի պատից ժայռում էին հանրապետական և միջազգային նշանակության տեսարժան վայրերը. Որոտանի կիրճում գտնվող 18 մետրանոց Շաքիի ջրվեժը, 3597 մետրանոց բարձրությամբ Աժդահակի խառնարանն ու լիճը, Դիլիջան քաղաքի մոտ գտնվող Հարբաժ անտառը, Գառնու ձորի բազալտե սյուները, Գորիս-Կապան ճանապարհի բնական թունելը, Պարզ լճի բնապատկերը, Սևանա լճի մայրամուտը: Մեծ հետաքրքրությամբ, զարմանքով ու հիացմունքով էին աշակերտները շրջում Գյումրիի ավազահանքում հայտնաբերված, տարիքով փոքր, բայց չափսերով հսկայական սառցադաշտային փղի ձագի շուրջ:

Կնճիթներով նկարող, պարող, պրոֆեսիոնալ ֆուտբոլ խաղացող փղերի մասին կարճամետրաժ ֆիլմ դիտելուց հետո մար-

տի 22-ի՝ Ջրի միջազգային օրվան ընդառաջ՝ թանգարանի աշխատակիցը կլոր սեղանի շուրջ աշակերտներին հղեց որոշ հարցեր (Ի՞նչ եք հասկանում Ջրի միջազգային օր ասելով: Ե՞րբ է այն նշվում: Քաղցրահամ ջրի ի՞նչ պաշարներ կան ՀՀ-ում: Մարդու օրգանիզմի քանի՞ տոկոսն է ջուր), որոնք ստացան իրենց ստույգ պատասխանները:

Այցելեցինք Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, որտեղ պահվում է ձեռագրերի և միջնադարյան գրքերի՝ աշխարհի ամենախոշոր հավաքածուներից մեկը: Հին ձեռագրերի և փաստաթղթերի պահպանման և ուսումնասիրման կենտրոնում ամենայն մանրամասնությամբ ներկայացրին հայերեն ձեռագիր մատյանների ամենախոշոր պահոցի՝ Մատենադարանի ստեղծման պատմությունը (1921 թիվ, էջմիածնի մատենադարանի հիմքի վրա): Այն համարվում է գիտահետազոտական առաջին հաստատությունը Հայաստանում: Մատենադարանն էջմիածնից տեղափոխվել է Երևան 1939 թվականին: Այնտեղ պահվում է շուրջ 18.000 ձեռագիր: Կար նաև հատուկ սրահ, որտեղ ցուցադրված էին Արցախում պահպանված ձեռագրերի և փաստաթղթերի յուրօրինակ նմուշներ: Ակնհայտ էր, որ մեծ աշխատանք է տարվում հին ձեռագրերի պահպանման ու վերականգնման, պատճենահանման ու թվայնացման, ձեռագիր հուշարձանների հավաքման, նորոգումների ուղ-

ղությամբ: Արցախյան ազատամարտում և զինադադարից հետո գոհված ազատամարտիկների և զինծառայողների հիշատակը հարգելու, նրանց կատարած սխրագործությունների, հայրենասիրության և անձնվիրության օրինակներով գալիք սերնդին դաստիարակելու նպատակով այցելեցինք Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հուշահամալիր-պանթեոն, որտեղ ամփոփված են Ջորավար Անդրանիկի, Հայաստանի ազգային հերոսների Վազգեն Սարգսյանի, Ջիվան Աբրահամյանի, Մոնթե Մելքոնյանի և ուրիշ հայորդիների աճյուններ: Ամենաթարմ շիրիմը Արմեն Հովհաննիսյանին է, ով 2014 թվականի հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը մարտական դիրքում իր առջև դրված խնդիրը

արիաբար կատարելու համար մինչև վերջին շունչը մարտնչել ու ընկել է հերոսի մահով (Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հրամանով Արմեն Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Այդ պարգևի ամենաերիտասարդ մեդալակիրն է նա: Իսկ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը նրան հետմահու պարգևատրել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» մեդալով): Հայոց ցեղասպանության զոհերին հարգանքի տուրք մատուցելու և սերունդների հիշողության մեջ մեր պահանջատեր լինելու գաղափարը վառ պահելու նպատակով այցելեցինք Ծիծեռնակաբերդ բլրի բարձունքի վրա կառուցված Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Սրտի անիոն գավով, լուռ խոնարհումով և աղոթքի մրմունջներով ծաղիկներ դրեցինք զոհերի հիշատակի հավերժական կրակի շուրջ:

10

ՄՆԱԿՈՒՅՑ

ՁԵՆՔԻ ԵՎ ԱՐՎԵՍԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՄ

Գեղահակությունը հայ ազգի բնորոշ հատկանիշներից է, ինչի լավագույն ասպարեզը Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում օրերս կայացած մրցույթ-ցուցահանդեսն էր՝ մասնակցությամբ ՊԲ զինծառայողների և Արցախյան պատերազմի մասնակիցների: Այն կրում էր «Իմ հոգում արև է ու գարուն» խորագիրը և նվիրված էր Հայրենյաց պաշտպանի օրվան: Այցելուների և հյուրերի շրջանակն էլ լայն էր՝ պետական այրեր, արվեստագետներ, բաժնագույն սպայակազմ, լրագրողներ, արվեստասեր հասարակայնության մի ստվար հատված: Միջոցառումը նախաձեռնել էին ԼՂՀ պաշտպանության նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման և վերաբնակեցման վարչությունը և «Մայրություն» ՀԿ-ը: Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, ինչպես նաև Արցախի ազատամարտիկների միության աջակցությամբ: Մրցույթ-ցուցահանդեսի նպատակը՝ զարգացնել ՊԲ սպաների և ժամկետային զինծառայողների, Արցախյան ազատամարտի մասնակիցների, վետերանների ու հաշմանդամների հոգևոր-մշակութային կյանքն ու նպաստել նրանց ակտիվ հանգստի կազմակերպմանը, խթանել հայկական արվեստի լավագույն ավանդույթները Արցախի համայնքներում, ի հայտ բերել շնորհալի ստեղծագործողներին: Հանրապետության 35 գյուղերից ու քաղաքներից 94 մասնակից, հոգու և մտքի խոյանքները ձեռքբերի ճարտարությամբ շաղախած, արվեստի մի շքեղ հրավառություն էին ստեղծել մշակույթի պալատի ճեմասրահում՝ իրենց հոգում շողարձակող արևն ու գարունը փոխանցելով ներկաներին: Գեղանկարները փայլում էին ծիածանի բոլոր գույներով

ու թույրերով՝ զարմանալի թարմությամբ լցնելով շուրջբոլորը: Արվեստի գործեր ստեղծելիս մասնակիցների երևակայությունը, հումքի ընտրության առումով, շլացնում էր իր բազմազանությամբ՝ թուղթ, կավ, քար, մետաղ, փայտ, ապակի և այլն: Միայն ափսոսում ես, որ այդքան կարճ ժամանակում հնարավոր չէր ձևավորվում ողջ ցուցահանդեսը, գրուցել մասնակիցների հետ: Մասնակիցների թվում կային և՛ նախորդ ցուցահանդեսներից ծանոթ դեմքեր, և՛ նոր անուններ: Նրանք իրենց գոհունակությունն էին հայտնում միջոցառման կազմակերպիչներին, քանի որ այն հնարավորություն է ընձեռում ոչ միայն իրենց աշխատանքները ներկայացնելու, այլև շփվելու միմյանց հետ, նոր ծանոթություններ հաստատելու:

Մրցույթի հանձնախմբի նախագահ, «Գյուղայան» կիրառական արվեստի ինստիտուտի ղեկավար, քանդակագործ Յու. Հովհաննիսյանը խոստովանեց, որ հիրավի դժվար էր ընտրություն կատարել այդքան տարատեսակ ու բազմաբանակ գործերից. «Մենք սովոր ենք գեղարվեստական գործերը գնահատել ըստ ժանրերի՝ գեղանկարչություն, քանդակ, կիրառական արվեստ, բայց այնքան աշխատանքներ կային, որոնք ժանրային չափանիշներից դուրս էին. օրինակ՝ առաջին հայացքից անհետք թվացող մատյուրմորտի ժանրով արված քանդակը: Այս ցուցահանդեսն ապացուցեց «Արվեստը արվեստի համար» տեսության սնանկությունը՝ հաստատելով մի պարզ ճշմարտություն, որ արվեստը ժողովրդի համար է, իսկ այն հանգամանքը, որ ստեղծագործողները ՊԲ նախկին ու ներկա զինծառայողներն են,

առավել գնահատելի է դարձնում այն»:

Ապա մշակույթի պալատի մեծ դահլիճում կայացավ ցուցահանդես-մրցույթի արդյունքների ամփոփման և պարգևատրման արարողությունը: ԼՂՀ ՊԲ հրամանատարի հրամանով դրամական

յանին / պրոֆեսիոնալ գեղանկարչություն, ք. Շուշի/:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը գերատեսչության անունից պարգևատրումներ կատարեց. 1-ին տեղ-2-րդ կարգի հաշմանդամ Մելքունյան Արամ /հայկական ազգային երաժշտական գործիքների քարոզման և պահպանման համար, գ. Խնասպատ/, 2-րդ տեղ- ազատամարտիկ, նկարիչ Սերգեյ Առստամյան /ճարտարապետական հուշարձանների քարոզման և պահպանման համար/:

Արցախի ազատամարտիկների միության աշխատակազմի ղեկավար Ռոբերտ Բաղդասարյանը թանկարժեք նվերներ հանձնեց Վահագն Միրզոյանին/Հաղթող, լավագույն գեղանկարչական աշխատանք/, Դավիթ Զաքարյանին/ Մարտունի, լավագույն քան-

դակ/ Մարդի Աղաջանյանին/ Ասկերան, եկեղեցու լավագույն մանրակերտ/, 1-ին կարգի հաշմանդամ Էրիկ Աբրահամյանին /Ստեփանակերտ, փայտի գեղարվեստական մշակում/:

Նկարիչների միություն ՀԿ «Ինքնուս նկարիչ» անվանակարգում

պարգևատրել է Արծվիկ Լալայանին՝ Հաղթողից:

«Մայրություն» ՀԿ նախագահ Հասմիկ Միքայելյանը, ով նաև միջոցառման ամենակտիվ կազմակերպիչներից է, դիպլոմներով ու հուշամեդալներով պարգևատրեց մրցույթի 11 հաղթողների, նաև նվերներ հանձնեց մրցույթի՝ տարբեր անվանակարգերում հաղթող ճանաչված 7 մասնակիցների: Հաղթողի Արևշատ գյուղից ռուսաստանաբնակ բարերար Վաչագան Ամիրջանյանի ներկայացուցիչ Մարատ Հակոբյանը դրամական պարգևներ հանձնեց 11 մասնակցի՝ ազատամարտիկների և 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամներին:

Միջոցառմանը մի առանձին շուք հաղորդեցին ՊԲ «Ապետ» համույթի տղաներն իրենց կատարումներով, Մելինե Պետրոսյանի ու Արմինե Բաղդասարյանի ասումները և Ստեփանակերտի մշակույթի տան պարախումբը:

Եվ այսպես, մրցույթի 94 մասնակիցներից 42-ը խրախուսվեցին տարբեր մրցանակներով, սակայն ուզում են հավելել, որ անկախ մրցույթի արդյունքներից՝ բոլորն են հաղթող, քանզի նրանք պատերազմում հաղթած բանակի զինվորներն են՝ իրենց բազկի ուժով հաղթանակ կռած, հայրենիք ազատագրած, սահման պահող ու երկիր շենացնող, իրենց հոգում ամբարված գեղեցկությունը արվեստի միջոցով մեզ փոխանցող: Իսկ օրվա խորհուրդը, որ կարելի էր կարողալ ցուցահանդեսի յուրաքանչյուր այցելուի դեմքին, այսպիսին էր՝ անպարտելի է երկիրը, որի զինվորը գեներալ գառ նաև գեղեցկի պաշտամունք ունի:

Մելանյա ՄԻՆՈՅԱՆ



ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

9 Չայ ժողովրդի՝ փյունիկ թռչունի պես մոխիրներից վեր հանելու, ապրելու, արարելու և հարատևելու յուրահատուկ հատկությունների մասին էի խորհում ետդարձի ճանապարհին:

Հրաչյա Քոչարի կյանքի վերջին տարիներին լույս տեսած «Կարոտը» վիպակի բեմականացումը դիտեցիք Յուրիկ Մալյանի անվան կինոդերասանի թատրոնում: Գյուղացի Առաքելի կյանքի պատմությունը, հայրենի եզերքների հանդեպ ունեցած կարոտից թուրքալի սահմանը խախտելը, Արևմտյան Հայաստանում մնացած ծննդավայրում արևածագը դիմավորելն ու ետ դառնալը, ՊԱԿ-ի կողմից միամիտ ու պարզ գյուղացու ձեռքակալությունը, հարցաքննություններն ու ողբերգական վախճանը հանդիսատեսին ստիպեցին տխրել և ուրախանալ, հուզվել ու արտասվել:

Ներկայացման մեջ կատարվող իրադարձությունները դերասանները ներկայացնում էին անմիջական ու անկեղծ ապրումներով ու շոշափելի գույներով:

Մեր էքսկուրսիան ուխտագնացություն դարձնելու նպատակով նաև այցելեցինք վեց եկեղեցիներ՝ հայրենի Արցախում յոթերորդ եկեղեցուն լինելու պայմանով: Պատմական Սյունիքի Վայոց Ձոր գավառի Ամաղու գյուղից արևելք, բարձրաբերձ ժայռաբեկորների տակ

ծվարած Նորավանքի վանական համալիրը (Օրբելյան իշխանական տոհմի նշանավոր կենտրոնը), Արարատի մարզի Խոր Վիրապի վանքը (Ըստ պատմիչ Ազաթանգեղոսի՝ Արտաշատի արքունական բանտի գուբուն քրիստոնեություն տարածելու պատճառով Տրդատ 3-րդ Մեծի կողմից հալածանքների է ենթարկվել և իր կյանքի 14 տարիներն է անցկացրել Գրիգոր Լուսավորիչը: Մենք տեսանք նաև այդ վիրապը, հիացանք Խոր Վիրապից դեպի բիբլիական Արարատ բացվող տեսարանով), հայկական եկեղեցիների շարքում ամենախոշորը համարվող, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի նախաձեռնությամբ կառուցված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցական համալիրը (այստեղ ամփոփված են Գրիգոր Լուսավորչի մատուցները), Եռաբլուրի Սրբոց Վարդանանց Նահատակաց, ՀՀ մայրաքաղաք Երևանում գտնվող Սուրբ Երրորդություն և Սուրբ Սարգիս եկեղեցիները մեզ հիացնումը պատճառեցին իրենց ճարտարապետական կատարելությամբ, աչք շոյող գարդաբանդակներով ու բարձրաբանդակներով:

Մեր մեծերին՝ հանճարեղ գրողներին, գրա-

կանագետներին ու լուսավորիչներին մեծարելու, նրանց ասարած կյանքի ու անցած ստեղծագործական ուղու մանրամասնություններին առավել մոտիկից ծանոթանալու նպատակով



այցելեցինք գեղեցկության երգչի ու սերմնացանի՝ Ասկեր Բակունցի, մեծ անհատականության և տաղանդավոր գրողի՝ Պարույր Սևակի, Ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի, հայ նոր գրականության հիմնադրի և լուսավորչի՝ Խաչատուր Աբովյանի և նորագույն գրականության սկզբնավորողի՝ Եղիշե Չարենցի թանգարաններ: Այցելեցինք նաև ՀՀ և ԼՂՀ ազգային հերոս Վազգեն

Սարգսյանի անվան թանգարան: Խաչատուր Աբովյանի անվան տուն-թանգարանում մեզ անակնկալ էր սպասվում: Թանգարանի տնօրենը հայտնեց, որ շուտով Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անունը կորող հ. 1 հիմնական դպրոցին կից բացվելու է գրողի անվան թանգարան, որը տարբերվելու է միայն չափերով: Մեծ պատիվ էր Եղիշե Չարենցի անվան տուն-թանգարանում նրա թոռնուհու՝ Գոհար Չարենցի մակագրությամբ առձեռն գրքեր ստանալը:

Երեկոյան Երևանի գեղեցկությունը վայելելուց հետո բարձր տրամադրությամբ, հոգևոր մեծ պաշարով և անկրկնելի տպավորություններով վերադարձանք Արցախ:

Շրջագայության մասնակիցների անունից շնորհակալություն են հայտնում Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժնի մեթոդիստ Անահիտ Մետրոսյանին՝ ծրագրի մտահղացման և նախաձեռնման, կրթության բաժնի պետ Կարլեն Մարգարյանին՝ միջնորդության և ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանին՝ ծրագրի իրականացմանը նպաստելու և հովանավորելու համար:

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ
Սրբեկ. հ. 6 հիմն. դպրոցի ՍԴԳԳ
կազմակերպիչ

ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

ԱՐՅԱՆԱԿԱՆՉ



Բելա ՍԱՀԱԿՅԱՆ: Ծնվել է ԼՂ Սարտակերտ քաղաքում: Ստվորել է Սարտակերտի Թ. Ավթանդիլյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում: 1992թ. տեղափոխվել է Դայաստան, որտեղ և շարունակել է միջնակարգ կրթությունը: Մասնագիտությամբ բանասեր է, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Լրագրող է: 2006 թվականին հայրենակազմով վերադարձավ հայրենի քաղաք, որտեղ և բնակվում է: Աշխատում է Վարդան Մինասյանի անվան հիմնական դպրոցում՝ որպես հոգեբան, ստեղծագործական խմբակի խմբակավար, ինչպես նաև վարում է մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի լրագրողական խմբակը: Ստեղծագործում է մանկուց: Տպագրվել է հայաստանյան և Սարտակերտի «Ջրաբեր» թերթում: Ամուսնացած է, ունի որդի:

ՎԵՐԱԴՈՐՉ ՄԱՐՏԱԿԵՐՏ

Եկել եմ վերջապես, Մարտակերտ, Պանդուխտ հայերից թեզ ողջույն, Կարոտն եմ բերել ողջակեզ, Նրանց հառաչը տխուր:

Եկել եմ՝ անցնեմ մայրերով, Փողոցով իմ մանկուք օրերի, Որ հորս տնկած թեմին Պատմի հեքիաթները բոլոր:

Եկել եմ, որ տան պատերին Բորբոսնած խոնավը չիջիսի, Եկել եմ, որ ծուխն օջախիս երբեք ու երբեք չմարի...

Եկել եմ, բայց ուշ է կարծես... Այգուս մեջ՝ փուշ ու տատասկ... Դատարկ, թալանված իմ տան մեջ Վիշտն ու ցավն է բնակվել, ավաղ...

Բայց ազատ է Արցախն իմ, Խաղաղ է երկինքը հայոց... Ո՛ր է թե նորից տուն դառնան Զավակները թո հեռավոր...

Ու նորից միասին վերհիշենք, Ջրենք մեր հողը ծարավ... Ամենուր տնկենք թեմնի, Սեղաններ փռենք ծայրից ծայր...

Խմենք մուշկեթի գինով Կենցաղ Արցախ աշխարհի... Նրանց, ովքեր տուն չդարձան, Հոտնկայս վերհիշենք հիրավի...

Ու թող ամենուր գրնգա Ծիծաղը առողջ մանուկի... Նորից հորովել կանչի Հանդուսն հովիվ ծերունին...

Միայն մենք մեզ չխաբենք, Կշեռքին չդնենք խիղճը մեր... Եկեք լինենք միշտ ազնիվ՝ Բնիկ դարաբաղցուն վայել...

Որ նորածին մանուկին

Թողնենք համբավ ու վաստակ... Ինչ կարող ենք այսօր անել՝ Զթողնենք... չթողնենք վաղվան...

Ու թող թշնամին վաղեմի Մեր անունը վախով վանկարկի... Բայց լավ կլինի ավելի՝ Էլ երբեք չունենանք թշնամի:

Մենք եղել ենք, ապրում ենք, կանք՝ Ինչպես լեռներն անասան, Միայն թե ապրենք խաղաղ, Միայն թե սիրենք իրար...

ՏՈՒՆԴ ԱՐՑԱՄԵՆ Է, ՈՐԴԻՄ

Դու ծնվեցիր. շփոթված Նայեցի թո աչքերին, Արցախ աշխարհը տեսա Ու Հայաստանը անծիր:

Տեսա զուլալ մանկություն, Խաղաղ երկինք ու արև, Տեսա Աստուծո օրհնություն, Սուրբ տաճարներ ու վանքեր:

Ու գրկեցի թեզ վախով, Պինդ սեղմեցի իմ կրծքին, Վերածնված իմ Արցախ, Իմ տուն, իմ շունչ, իմ հավատ:

Եվ ափերում ձեռքերիդ Հայոց քարտեզը տեսա, Բռունցքներում թո փոքրիկ Նախնյաց ուժ կա անասան:

Երբ ոտք դիրք թո հողին, Դու ամրացար, ինչպես ծառ, Տունդ Արցախն է, որդիս, Այստեղից չհեռանաս:

ԻՄ ՏՈՒՆԸ

Երազուն տեսա ես մեր տունն ավեր, Նստեցի քարին, լացեցի անկար, Նա ինձ պես լուռ էր, օտարված, անտեր, Ներսուն հարազատ ոչ մի շունչ չկար:

Կամաց բացեցի դռները մեր հին, Կտուրի ներքո ցավ էր ու անդորր, Ո՞վ էր կողոպտել հուշերն իմ անգին, Ասես զարկվեց իմ սիրտը անգոր:

Լուռ հավաքեցի փայտիկներն արնոտ, Սրբազան դողով կրակ վառեցի, Թոնիրը ծխաց իբրև հին կարոտ, Ու թախտի վրա հանդարտ մարեցի:

Աչքս բացեցի ծանր երազից, Մորս գիրկն ընկած լացի կարեվեր, - Մայրիկ,- ասացի,- այսօր ես նորից երազուն տեսա մեր տունը ավեր:

ԾԻՐԱՆԵՆԻ

Դու ծաղկել ես արդեն, Ների՛ր, ների՛ր ինձ, Անտարբեր անցել եմ կողքով, Դու շռայլորեն թո բույրն ես սփռել՝ Գարուն շաղ տալով մեր բակով:

Ես եմ ուշացել, թե դու ես շտապել, Հյուսել ծաղկեփունջ շողերից, Վախենում եմ՝ դու հանկարծ մրսես, Կարկուտը թեզ ցավ պատճառի:

Վախենում եմ հույսը ճյուղերիդ մնա, Ծաղիկդ մահաճա հանկարծ, Վախենում եմ՝ արևից նեղանաս, Մնաս անպտուղ ու մեմակ:

Ուզում եմ, որ դու միշտ ուրախ լինես, Ծաղիկդ սիրով միշտ ժպտա, Ուզում եմ, որ դու ինձ չնմանվես, Զթախծես, չտխրես հանկարծ:

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Դժվար չէ կռահել «ճակատագիր» բառի իմաստն՝ առանց բացատրական բառարանի օգնության: Գակատից գրած գիր, ինչպես տապանագիրը, որ շիրմաքարի վրա գրվում է որևէ վարպետի կողմից: Իսկ ո՞վ է ճակատից գրողը և որտե՞ղ է ապրում՝ երկրի վրա՞, թե՞... որ գալիս է, գրում մանկան լույս աշխարհ գալուց և անհետանում: Իսկ գիրն ուղեկցում է մանկանը նրա ողջ կյանքի ընթացքում: Բայց չէ՞ որ ընդունված է ասել՝ մարդն ինքն է իր ճակատագրի կերտողը, ինչպես ցանկանա, այնպես էլ կարող է կարգավորել իր գործերը:

Ճակատագիրը երկու տարբեր ճակատագրեր, որոնք գուցե օգնեն մեզ՝ փոքր-ինչ հասկանալու: Ներկայացնենք երկու տարբեր ճակատագրեր, որոնք գուցե օգնեն մեզ՝ փոքր-ինչ հասկանալու: Ներկայացնենք երկու տարբեր ճակատագրեր, որոնք գուցե օգնեն մեզ՝ փոքր-ինչ հասկանալու:

Ֆիզիկոսները երբ լսում էին, որ դամիացի մեծ գիտնական Նիլս Բորը պատրաստվում է եվրոպական որևէ քաղաքում դասախոսություն կարդալ, շտապում էին այնտեղ՝ լսելու նրան: Մյուսիններում Ձոներֆելդը մոտ է կանչում իր աշակերտ Հեյզենբերգին, որ միասին գնան լսելու այդ մեծ ֆիզիկոսին: Գնում են: Հեյզենբերգը տասնհինգ տարեկան էր և գիտական վեճի մեջ է մտնում աշխարհահռչակ Բորի հետ: Արդյունքը լինում է այն, որ երիտասարդի անունը շուտով հրապարակվում է զոմերֆելդյան պարբերականներից մեկում, և 23 տարեկան հասակում արդեն ափսոսանք էր բռնի մոտ, 24 տարեկանում տեսական ֆիզիկայի դասախոսություններ էր կարդում Կոպենհագենում, 26 տարեկանում դարձավ պրոֆեսոր Լայպցիգի համալսարանում, 33-ում ստացավ Նոբելյան մրցանակ հիմնարար նշանակություն ունեցող իր աշխատությունների համար: Նա միշտ իրեն համարում էր հաջողակ մարդ: Նրա մտքի փայլուն նվա-

ճումները, «Անորոշության սկզբունքները» կարծես երկնքից էին թափվում նրա վրա: Պատերազմի սարսափելի տարիներն էին: Աշխատանքի վայրից տուն էր գնում հեծանվով, ճանապարհին կանգնեցնում է մի մոլեռանդ հսկայի նացիստ: Կյանքը թելից էր կախված: Հեյզենբերգը գրպանից հանում է անգլիական թանկարժեք ծխախոտի մի տուփ և առաջարկում վերցնել ու այդպես թեթև ազատվում ու շարունակում է իր ճանապարհը:

Մեծերի կյանքը ճակատագրից անխուսափելի էր: Գերմանական Ֆիզիկոս-ատոմագետների և ներկայի Անգլիայում, որոնց մեջ էր նաև Հեյզենբերգը: Նրանց պահում էին հրաշալի պայմաններում. հիանալի սնվում էին, հանգստանում, զբաղվում իրենց գիտական աշխատանքով:

Հետագայում, վերհիշելով այդ օրերի մասին, Վեյցզելերը գրում է. «Եթե ես չարունակ չանհանգստանայի ընտանիքիս համար, ապա կարող եմ ասել, որ գուցե երբեք այդքան լավ ժամանակ չեմ անցկացրել, ինչպես այնտեղ»: Մեկ այլ ճակատագիր: Մարդ, որի գիտական աշխատանքն ամենահեղափոխականն էր գիտության մեջ: Խոշոր գիտնական լինելուց բացի, ամենաազնիվ ու համեստ մարդկանցից մեկն էր: Մաքս Պլանկը՝ Բեռլինի կայսր Վիլհելմի անվան ինստիտուտի ղեկավար, ունեցողը մշտապես կմնա գիտության մեջ՝ Պլանկի հաստատունով: Սակայն նրա ամբողջ կյանքը ողբերգություն էր, ճակատագրի անողորմ հարված:

Մի որդին սպանվել է Առաջին համաշխարհային պատերազմում: Գնացել էր Ստոկհոլմ՝ Նոբելյան մրցանակ ստանալու: Այդտեղ էլ հայտնում են, որ

մահացել են նրա երկվորյակ աղջիկները: Բեռլինի ռմբակոծության ժամանակ փլատակների վերածվեց նրա տունը, կողոպտվեց գրադարանը, շատ արժեքավոր փաստաթղթերի հետ միասին՝ նաև Եյնշտեյնի մանակները: Փրկվելով ռմբակոծության այդ սարսափներից՝ ինքը և կինը ընկնում են ավազակների ճանկը և կողոպտվում մինչև վերջին թելը: Դրանից հետո կինը մնաց փլատակների տակ և մահացավ:

1945թ. հունվարի վերջին նրա մյուս որդին՝ Էրվինը, մահապատժի ենթարկվեց նացիստների կողմից՝ Հիտլերի դեմ մահափորձին մասնակցելու համար: Ապրեց ծերության և մեռավ 90 տարեկանում, որը ևս մեծ հարված է: Մահացավ 89 տարեկանում:

Ո՞վ գրեց այդքան դաժան գիրք նրա ճակատին: Գիտության գաղափարները ճակատագրի մեջ հեղաշրջում մտցրած այդ մարդն ինչու է չկարողացավ իր ճակատագրի մեջ մտցնել փոքր-ինչ փոփոխություն...

Տողերիս հեղինակը պատասխան չունի այդ հարցին. գուցե կարողանան պատասխանել աստվածաբանները՝ կամ հոգեբանները: Սակայն հակված եմ այն մտքին, որ ճակատագիրը սահմանված չէ նախանշանության, Վերին ամենաստեղծի կողմից: Եվ մարդ ինքն է իր ճակատագրի կերտողը: Այն ստեղծվում է մեր իրական կյանքից, միջավայրից, և հաճախ ենք կրում այդ հարվածները:

Մեր ճակատագիրը տնօրինում են ուրիշները, առանձին անհատներ...

Նունե ՄԵԼՈՒՄՅԱՆ Հայրույթի շրջ., գ. Առաջամուկ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԳԱՐՏՆԻՔԸ

Գեղեցիկ մի պարտեզում վարդի մի մեծ թուփ էր աճում: Մեր հեքիաթը նրա ճյուղերից մեկի մասին է: Գյուղը երջանակի ապրում էր մայր թփի վրա: Ամեն օր արշալույսին ողջունում էր արևին, լվացվում վաղորդյան ցողով, ըմբռնվում արևի կենարար ճառագայթներով, հագեցնում ծառավը մայրական արմատներով իրեն հասնող ջրով: Այսպես անցան գարունը, ամառը, աշունը ու ձմեռը: Երիտասարդ ճյուղը անհամբեր սպասում էր գարունը: Նա հույս ուներ ծաղկել իր մեծ թուփերի պես:

Գարուն մի պայծառ օր այգուն հայտնվեց պարտեզի պանը: Գյուղիկն ուրախացավ: Նա ճանաչում էր այդ մարդուն, ով հոգում էր պարտեզի բոլոր ծառերի, ծաղիկների մասին, փխրեցնում, ջրում, պարարտացնում էր հողը, ոչնչացնում վնասատուներին, հեռացնում չորացած ուտերը: Այդ օրը նրա ձեռքին ոչ թե բախ էր, այլ մկրատ: Հետաքրքրությունից թե դեռևս անհասկանալի հուզմունքից, ճյուղը դուրս: Մկրատի սառը շուրթերը պինդ համբուրեցին ճյուղի վզիկը: Նրա շունչը մի պահ կտրվեց, նա ասես կորցնում էր գիտակցությունը և միայն աղոտ հիշում, թե ինչպես էին իր ճակատագրին արժանացնում իր թույրերից շատերը:

- Աստված իմ, մի՞թե սա այն մարդն է, ով մեզ խնամում էր, նա առաջ այնքան բարի էր, հոգատար, ինչու է այսքան չարացել: Մայրի՛կ...

Գյուղի ակնաքնություն մայր թփի տնոցն էր: Նա գիտեր, որ դա անխուսափելի է, բայց տնքում էր բաժանման ցավից ու երկա՛ր արտասվում: Գյուղը թույրերի հետ հայտնվեց մի կապոցում: Հաջորդ օրվա արևածագը ճյուղը դիմավորեց ճանապարհին: Նա ուշքի եկավ մի ամայի, նույն էր արևին, լվացվում վաղորդյան ցողով, ըմբռնվում արևի կենարար ճառագայթներով, հագեցնում ծառավը մայրական արմատներով իրեն հասնող ջրով: Այսպես անցան գարունը, ամառը, աշունը ու ձմեռը: Երիտասարդ ճյուղը անհամբեր սպասում էր գարունը: Նա հույս ուներ ծաղկել իր մեծ թուփերի պես:

Գարուն մի պայծառ օր այգուն հայտնվեց պարտեզի պանը: Գյուղիկն ուրախացավ: Նա ճանաչում էր այդ մարդուն, ով հոգում էր պարտեզի բոլոր ծառերի, ծաղիկների մասին, փխրեցնում, ջրում, պարարտացնում էր հողը, ոչնչացնում վնասատուներին, հեռացնում չորացած ուտերը: Այդ օրը նրա ձեռքին ոչ թե բախ էր, այլ մկրատ: Հետաքրքրությունից թե դեռևս անհասկանալի հուզմունքից, ճյուղը դուրս: Մկրատի սառը շուրթերը պինդ համբուրեցին ճյուղի վզիկը: Նրա շունչը մի պահ կտրվեց, նա ասես կորցնում էր գիտակցությունը և միայն աղոտ հիշում, թե ինչպես էին իր ճակատագրին արժանացնում իր թույրերից շատերը:

- Աստված իմ, մի՞թե սա այն մարդն է, ով մեզ խնամում էր, նա առաջ այնքան բարի էր, հոգատար, ինչու է այսքան չարացել: Մայրի՛կ... Գյուղի ակնաքնություն մայր թփի տնոցն էր: Նա գիտեր, որ դա անխուսափելի է, բայց տնքում էր բաժանման ցավից

պարտիզայանի գործողությունների իմաստը: Թփիկը դադարեց լալ և ավելի խորացրեց արմատները: Հաջորդ գարնանը թփիկի կոկոնները ճանապարհին: Նրա ուշքի եկավ մի ամայի, նույն էր արևին, լվացվում վաղորդյան ցողով, ըմբռնվում արևի կենարար ճառագայթներով, հագեցնում ծառավը մայրական արմատներով իրեն հասնող ջրով: Այսպես անցան գարունը, ամառը, աշունը ու ձմեռը: Երիտասարդ ճյուղը անհամբեր սպասում էր գարունը: Նա հույս ուներ ծաղկել իր մեծ թուփերի պես:

Գարուն մի պայծառ օր այգուն հայտնվեց պարտեզի պանը: Գյուղիկն ուրախացավ: Նա ճանաչում էր այդ մարդուն, ով հոգում էր պարտեզի բոլոր ծառերի, ծաղիկների մասին, փխրեցնում, ջրում, պարարտացնում էր հողը, ոչնչացնում վնասատուներին, հեռացնում չորացած ուտերը: Այդ օրը նրա ձեռքին ոչ թե բախ էր, այլ մկրատ: Հետաքրքրությունից թե դեռևս անհասկանալի հուզմունքից, ճյուղը դուրս: Մկրատի սառը շուրթերը պինդ համբուրեցին ճյուղի վզիկը: Նրա շունչը մի պահ կտրվեց, նա ասես կորցնում էր գիտակցությունը և միայն աղոտ հիշում, թե ինչպես էին իր ճակատագրին արժանացնում իր թույրերից շատերը:

- Աստված իմ, մի՞թե սա այն մարդն է, ով մեզ խնամում էր, նա առաջ այնքան բարի էր, հոգատար, ինչու է այսքան չարացել: Մայրի՛կ... Գյուղի ակնաքնություն մայր թփի տնոցն էր: Նա գիտեր, որ դա անխուսափելի է, բայց տնքում էր բաժանման ցավից

Սուսաննա ՍԱՀԱԿՅԱՆ Ասկերանի շրջանի Նախիջեանիկի միջև. դպրոցի դասավար

ՈՒՐԱՆ ԷՋ

ԿԱՏԱԿՆԵՐ ՏԵՍՈՒՉԻ ԾՈՑԱՏԵՏՐԻՑ

- Եթե ծյուն գա, ի՞նչ ենք անելու, երեխաները:
- Հի՛նչ բիդի անհիմք, լիմոնավ չայընք խմ-
լան,- պատասխանեց չարածճի երիկը:

- Վարդան Մամիկոնյանը ե՞րբ է կռվել,-
հարցրեց ուսուցչուհին:
- Փետրվարի 23-ին:
- Ապրես, բալիկ ջան:

- Երեխաներ, կազմեք նախադասություն
«Սրտի զարկեր» բառակապակցությամբ:
- Սրտիս զարկերը դժվեցին,- պատասխա-
նեց առաջին դասարանցին:

- Քերականություն ասելով ի՞նչ եք հասկա-
նում:
- Բարձր դասարաններում չեն
դասավանդում:

- Մի առած ասա,- ուսուցիչը հարցրեց
Աշոտին:
- Ինչքան լեզու գիտես, այնքան մարդ ես:
- Սուտ ա ասում,- բղավեց աշակերտներից
մեկը:

Ձ-ով սկսվող մի Ղարաբաղի բառ ասեք,-
դիմեց ուսուցչուհին:
- Ձիրեկտոր,- պատասխանեց երեխան:

Հարցնում են առաջին դասարանցուն.
- Ի՞նչ ես ստանում:
- Ապրեսներ,- պատասխանեց երեխան:

Երեխան ընդհատում է ոգևորված դաս
պատմող ուսուցչուհուն.
- Ընգեր, է՞ս հինգա, լույս՞, թե տե՞գ, կծումա,-
հարցրեց երեխան:
- Վա՛յ, բալիկ ջան, դա հող ա,- աշխատեց
թաքցնել ուսուցչուհին:
- Ընգեր, հողը տրաքում ա՞,- հարցրեց երե-
խան:

- Այ տղա, ինչո՞ւ տետրդ չես բերել,- երեխա-
յին նախատեց ուսուցչուհին:
- Պապան խոզին դասացուցակը մաշին
կիրալ ա,- ասաց երեխան:

- Երեխաներ, ի՞նչ է մշակում «գերդաս-
տան», հարցրեց ուսուցչուհին ու սկսեց թվար-
կել.
- Թոռ, ծոռ, մոռ, կառ...
- Պա գա՞ռը,- հուշեց վերջում նստած ժիրայ-
րը:

- Եթե մեկ կովն ուտում է 5 կգ խոտ, յոթ կովը
քանի՞ կգ խոտ կուտի,- հարցրեց ուսուցչուհին:
- Է՛, ընգեր, հինգը՞ս մտածում, խոտը ածե
առաջը, թող ուտի,- ասաց երեխան:

- Եռհնչյուն ասելով ի՞նչ եք հասկանում,-
հարցրեց ուսուցչուհին:
- Ասիմ, վերը կրկնվում է երեք անգամ, պա-
տասխանեց երրորդ դասարանցին:

- Պսակեցին Մարոյին...- շարունակիր, բա-
լիկ ջան, հետո՞:

- Տվին անգյալ կարոյին:

- Երեխաներ թվարկեք երկրաչափական
պատկերներ...
- Եռանկյուն, շրջան, հատված, բեկյալ, վե-
ցանկյուն, հնգանկյուն...
- Չուռանկյուն,- ավելացրեց ուսուցչուհին:

- Դասի մեջ ըստ Ձեզ, ովքե՞ր են բացասա-
կան կերպարները:
- Կյողերը,- պատասխանեց երեխան:
- Դե բնութագրեք գողերին,- ասաց ուսուց-
չուհին:
- Ամբիղճ, անգուր, անսիրտ:
- Ապրես, ապրես, շարունակիր բալես,-
ասաց ուսուցչուհին:
- Քյալ ու զըրկլոխ,- պատասխանեց երե-
խան:

- Ո՞վ է գրել հայոց այբուբենը:
- Մաշտոցյան Մես-րո-ֆը:

- Ինչպիսի՞ն են պատկերում այն գյուղը, որ-
տեղ փայտը ձեռքով են կտրում:
- Այբեջառ շեն,- պատասխանեց երեխան:

- Խոզը ինչպիսի՞ կենդանի է,- հարցրեց ու-
սուցչուհին:
- Կլոխը խարաբ,- հպարտ պատասխանեց
գնդիկ Միշան:

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին

Ներկել է նաշխուն,- սա ի՞նչ է, երեխաներ:
- Հրա՛շք,- պատասխանեց երեխան:

Ուսուցչուհին լարված բացատրում է դասը,
առաջին նստարանին նստած չարածճի աղջի-
կը անդադար թափահարում է ձեռքը.
- Ասա, բալիկ ջան, ի՞նչ ես ուզում,- հարցրեց
ուսուցչուհին:
- Սոր ես ինձ լավըմ պահում:

- Կկարի՞ս ասիս, իմ հացիս մաշին հինգ կա
վեր սկսվում է «վ»-ով,- հարցրեց տեսուչին
առաջին դասարանցին:
- Վերմիշե՞լ, վեջինա՞, վաֆլի՞,- հարցրեց
տեսուչը:
- Վեշմին պեն,- ասաց երեխան:

Մաքրուհին բացակայում է դասից.
- Ո՞վ է բացակա:
- Ռակշան,- պատասխանեց երեխան:

- Քո պատճառով մազերս սպիտակել են,-
ուսուցչուհին նախատեց Ռուբիկին:
- Վեջինչ, ընգեր, ես պապուն ըսլանըմ քզե-
տե կրակա առնի, քսիս,- ելքը գտավ փոքրիկը:

Դասը տեսողական դարձնելու նպատակով
ուսուցչուհին գրատախտակին նկարեց մի ան-
ճոռնի տնակ.
- Ի՞նչ եմ նկարել:
- Մեր կյունը,- պատասխանեց երեխան:

Հավաքեց Սուսաննա ՀՈՎԱՏՓՅԱՆԸ
ԼՂՅ ԿՉՆ ԿՊՏ ԿԵՆՈՒՄ

Մարզական

ԼՂՀ ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
5-ՐԴ ՄՊԱՐՏԱԿԻՎԱՆ

ԱրԴՀ մարզադահլիճում կայացան ԼՂՀ դպրոցականների 5-րդ սպար-
տակահայի ծրագրով աղջիկների և տղաների միջև բասկետբոլի հանրա-
պետական մրցումները:

Մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների հավաքա-
կան թիմերը:

Նախ՝ մարտի 10-17-ը մրցեցին աղջիկների, ապա 17-21-ը՝ տղաների
հավաքականները:

Ուրախությամբ կարելի է փաստել, որ գնալով բասկետբոլ մարզածը
մեծ մասնաշաղկապում է վայելում դպրոցականների շրջանում, որի ապա-
ցույցը նախորդ տարիների համեմատ թե՛ աղջիկների և թե՛ տղաների կող-
մից ցուցադրած ավելի լավ խաղերն էին:

Նման մրցումների կազմակերպումը նպատակ ունի բացահայտել լավա-
գույն մարզիկ դպրոցականների՝ հանրապետության աղջիկների և տղանե-
րի հավաքականները համալրելու համար: Հիշեցման կարգով նշենք, որ, սկ-
սած այս տարվանից, ԼՂՀ դպրոցականների սպարտակահայի ծրագրով
նախատեսված բոլոր մրցումներից հաղթող թիմերը մասնակցելու են ՀՀ դա-
րոցականների միջև անցկացվող մարզական խաղերի միջմարզային փու-
լին, իսկ այդ փուլում հաջողության հասնելու դեպքում՝ եզրափակիչ փուլին,
որտեղ հաղթող թիմերը մասնակցելու են համաշխարհային մարզական խա-
ղերին:

Աղջիկների մրցումներն անցկացվեցին շրջանաձև, իսկ տղաներինը՝ վի-
ճակահանությամբ կազմված երկու ենթախմբերում, այնուհետև ըստ գրա-
ված տեղերի, միմյանց հետ հանդիպելով, որոշում էին վերջնական տեղերը:

Ծավալված համառ և անզիջում մրցակցության արդյունքներով մրցա-
վարական հանձնախույժը որոշեց հաղթողներին:

Աղջիկների մրցապայքարում մրցանակային տեղերը բաշխվեցին
հետևյալ կերպ՝

3-րդ տեղ՝ Շուշիի շրջանի հավաքական թիմ,
2-րդ տեղ՝ Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմ,
1-ին տեղ՝ Հաղրուբի շրջանի հավաքական թիմ:
Իսկ տղաների մրցապայքարում մրցանակային տեղեր գրավեցին՝

3-րդ տեղ՝ Մարտունու շրջանի հավաքական թիմ,
2-րդ տեղ՝ Հաղրուբի շրջանի հավաքական թիմ,
1-ին տեղ՝ Ստեփանակերտ քաղաքի հավաքական թիմ:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը պարգևատրվեցին կրթության և
գիտության նախարարության դիպլոմներով և հուշանվերներով, իսկ թիմերի
բոլոր 10-ական անդամները՝ համապատասխան կարգի մեդալներով:

Ձեռքի ժամացույցներով և պատվոգրերով պարգևատրվեցին լավա-
գույն խաղացողներ ճանաչված դպրոցականները: Աղջիկներից՝ Լուսինե
Սարգսյանը (Հաղրուբի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոց), տղա-
ներից՝ Արամ Մկրտչյանը (Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոց):

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց և հետա-
գա անձնական ու մարզական հաջողություններ մաղթեց կրթության և գի-
տության փոխնախարար Մ. Համբարձումյանը:

ՈՒՉՄԱԿԱՆԱՅՎԱԾ ՆԵՎԱՄԱՐՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՄՐՅՈՒՄՆԵՐ

Ստեփանակերտի հանրապետա-
կան մարզադաշտում մարտի 24-26-ը
կայացան ԼՂՀ հանրակրթական ու-
սումնական հաստատությունների 8-9-
րդ դասարանների տղաների միջև
նազմակամացված հնգամարտի հան-
րապետական մրցումները:

Մրցումներին մասնակ-
ցում էին Ստեփանակերտ
քաղաքի և ԼՂՀ բոլոր շրջան-
ների հավաքական թիմերը:

Յուրաքանչյուր թիմում
ընդգրկված էր 5 տղա:

Մրցումների հանդիսա-
վոր բացման ժամանակ ԼՂՀ
պաշտպանության նախա-
րարության ՌՀԴ և ՀԿՀԿ
բաժնի վարիչ՝ գնդապետ Բ.
Մուրադյանը, ողջունելով
մասնակիցներին, կարևորեց
նման մրցումների կազմա-
կերպումը որպես ռազմա-
մարզական կարևոր միջո-
ցառում՝ ֆիզիկապես ուժեղ
հայրենիքի պաշտպաններ



Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ
դպրոց:

Թիմային և անհատական հաշ-
վարկներով հաղթողները ԼՂՀ կրթու-
թյան և գիտության նախարարության
կողմից արժանացան համապատաս-
խան կարգի դիպլոմների, պատվոգրե-
րի, թանկարժեք նվերների և դրամա-
կան պարգևի:

Նվերներ և պատվոգրեր հանձն-
վեցին նաև մրցումների հինգ մր-
ցածներում: Վազբ 100մ, վազբ 1000մ,
նռնակի նետում, շրջավերելք պտտա-
ծողի վրա, ռազմակիրառական հա-
մակցված փոխանցումավազբ մր-
ցածներում լավագույն արդյունքներ
ցույց տված աշակերտներ Նվեր Մար-
տիրոսյանին (Հաղրուբի շրջան, Ազո-
խ), Ալբերտ Աղաջանյանին (Ստեփա-
նակերտ քաղաքի հ. 10 հիմնական),

Հարութ Գևորգյանին (Մարտունու շր-
ջանի Բերդաշենի միջնակարգ), Անդ-
րանիկ Իսախանյանին (Ստեփանակերտի
ֆիզմաթ), Դավիթ Մետրոսյանին (Մար-
տունու շրջանի Սոսի միջնակարգ) դա-
րոցներից:

Դ Ր ա մ ա կ ա ն
պարգևների արժա-
նացան նաև մրցա-
նակային տեղեր
գրաված թիմերի
մարզիչներ Վարու-
ժան Աղաջանյանը,
Ղարիբ Ախարյանը
և Սուրեն Ասրյանը:

Պարգևատրում-
ները կատարեց և
հաղթողներին շնոր-
հավորեց ԼՂՀ կր-
թության և գիտու-
թյան փոխնախա-
րար Մ. Համբար-
ձումյանը:

Թիմային և ան-
հատական հաշ-
վարկներով հաղթողները թանկարժեք
նվերներով և պատվոգրերով
պարգևատրվեցին նաև ԼՂՀ պաշտ-
պանության նախարարության կողմից:
Պարգևատրումը կատարեց և հաղ-
թողներին հետագա հաջողություններ
մաղթեց ԼՂՀ ՊՆՌՀԴ և ՀԿՀԿ բաժնի
ավագ սպա, մայոր Դ. Օհանջանյանը:
Ռազմափրկարարական մար-
զածից մրցանակային տեղեր գրա-
ված՝ Ասկերանի շրջանի, Ստեփանա-
կերտ քաղաքի և Հաղրուբի շրջանի
թիմերը պատվոգրերով և թանկարժեք
նվերներով պարգևատրվեցին ԼՂՀ փր-
կարար ծառայության կողմից:
Պարգևատրումը կատարեց գնդա-
պետ Ա. Ջավադյանը:

Սուրաթ ՇԱՐՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ **Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ** **Մտեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info** **Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:** **Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 29.03.2014թ.:**

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: